

ՀՅԴ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1921 Թ. ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնին*

Բանալի բառեր – Վրաստան, ՀՅԴ, Թիֆլիս, մեծամասնականներ, ընդհատակ, Պատասխանատու մարմին, գրագրություն, մենշևիկյան կուսակցություն, պանթյուրքական ծրագրեր, կենտրոնական կոմիտե:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Անդրկովկասյան երեք հանրապետություններում Հայ Յեղափոխական Դաշնակցության ծավալած ընդհատակյա գործունեության մասին գիտական հանրությունը շատ քիչ բան է հայտնի: Խորհրդային պատմագրությունը չի զլացել «քննադատել» ՀՅԴ ընդհատակյա «հակաժողովրդական» գործունեությունը, ինչը, անշուշտ, եղել է միակողմանի ու խիստ թշնամական մեկնաբանություն:

Միայն հետխորհրդային տարիներին հնարավոր եղավ որոշակի լույս սփռել ԽՍՀՄ-ում և մասնավորապես Խորհրդային Հայաստանում դաշնակցական ընդհատակի գործունեության պատմության վրա: Սակայն Խորհրդային Միությունում ՀՅԴ ընդհատակյա հարուստ գործունեությունը դեռ երկար ու հանգամանակից լուսաբանման կարիք է զգում: Այս տեսակետից մեծ արժեք են ներկայացնում ՀՅԴ Կենտրոնական արխիվում (ԱՄՆ, Մասաչուսեթս, Ուոթերթաուն) պահպանվող նյութերը: Բազմաթիվ գաղտնի նամակների, շրջաբերականների, զեկույցների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բավարար պատկերացում կազմելու տվյալ հիմնախնդրի վերաբերյալ: Ու թեև խորհրդապահական նկատառումներով փաստաթղթերի՝ գաղտնագրերով գրված լինելը բավականին դժվարացնում է գործը, բայց խնդիրն անլուծելի չէ:

Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդայնացումից հետո բոլշևիկյան ղեկավարությունը արգելեց ոչ բոլշևիկյան կուսակցությունների, այդ թվում և Հայ Յեղափոխական Դաշնակցության օրինական գործունեությունը: Սակայն երկրամասում խոր արմատներ ունեցող ՀՅ Դաշնակցությունը չէր ուզում դադարեցնել իր գործունեությունը, խորհրդային իշխանություն-

Վե՛ր համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) ցարի, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021

* Ընդունվել է տպագրության 30.11.2020

ներն էլ անկարող էին միանգամից բացահայտել նրա ճյուղավորված կազմակերպական ցանցը:

Փետրվարյան ապստամբությունից հետո Դաշնակցության բոլոր ակնառու դեմքերը ստիպված էին հեռանալ արտասահման, ինչը հիմնականում պայմանավորված էր հետագա անախորժություններից և ներքին բախումներից խուսափելու մղումով: Սակայն թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ մի շարք այլ հանրապետություններում ու երկրամասերում (Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Դրիմ, Դոնի Ռոստով, Մոսկվա, Ուկրաինա), ստեղծվեցին ընդհատակյա կոմիտեներ և կենտրոնական կոմիտեներ, վերագործարկվեց կուսակցական աշխատանքը:

Խորհրդային Միությունում կուսակցական կառույց պահելը ՀՅԴ-ի համար ինքնանպատակ չէր: Մտավախություն կար, որ բոլշևիկյան ռեժիմը կարող է ժամանակավոր լինել, հետևաբար անհրաժեշտության պարագայում Հայաստանին սպառնացող հավանական մարտահրավերներին դիմագրավելու համար պետք էր կազմակերպական ներկայություն ունենալ: Սկզբունքային որոշում կար ստեղծված իրավիճակում չդիմելու բռնի միջոցների Խորհրդային Հայաստանում բոլշևիկյան ռեժիմը տապալելու համար, խորհրդային տարածքում գործելու անլեզայ, իսկ արտասահմանում նաև լեզայ ճանապարհներով: Միաժամանակ, գաղափարական պայքար տանել Խորհրդային Հայաստանի ղեկավարության վնասակար քայլերի դեմ, բայց նաև օգտագործել ՀՅԴ արտասահմանի ներուժը՝ Խորհրդային Հայաստանի վերաշինությանն աջակցելու համար¹:

Խորհրդային Միության տարածքում և մասնավորապես Անդրկովկասում ՀՅԴ կազմակերպությունները իրենց անլեզայ գործունեությունը շարունակեցին մինչև 1933 թ.: Այդ տարի Փարիզում տեղի ունեցած ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողովը, լսելով Հատուկ հանձնախմբի գեկուցումը Երկրի կազմակերպության մասին, որոշեց դա լուծարված համարել²:

Ստորև ներկայացվող նամակները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում 1921 թ. Խորհրդային Վրաստանում (Վարդաձոր) ՀՅԴ ծավալած գործունեության վերաբերյալ: Խորհրդային առաջին տարիներին Վրաստանում դաշնակցականների համար համեմատաբար ավելի լավ պայմաններ կային, քան՝ Հայաստանում: Դա պայմանավորված էր նրանով, որ Խորհրդային Վրաստանի իշխանությունները իրենց ընդդիմադիրների շարքում հայ դաշնակցականներին տեսնում էին վրացի մենշևիկներից և մյուս ոչ բոլշևիկյան կուսակցություններից հետո: Բայց դա չի նշանակում, որ Վրաստանում ՀՅԴ դաշնակցությունը հանգիստ է գործել: Պարզապես հալածանքները փոքր-ինչ մեղմ են եղել: Դա հնարավորություն է տվել Վրաստանի խորհրդայնացումից

1 Տես Քաղաքներ ՀՅԴ. արտասահմանեան մարմիններու արտակարգ խորհրդաժողովի որոշումներէն, ա. տ., 1923, էջ 4:
2 Տես Քաղաքներ ՀՅԴ. Դաշնակցութեան ժԲ Ընդհ. ժողովի որոշումներէն, Փարիզ, 1933, էջ 16:

հետո վերակազմավորելու կուսակցական կառույցը, ունենալու ղեկավար մարմին՝ ի դեմս Կենտրոնական կոմիտեի, որը, դատելով ՀՅԴ Արտասահմանի պատասխանատու մարմինն հղված նամակներից, հսկայական աշխատանք է իրականացրել վերջինիս Անդրկովկասում տիրող քաղաքական կացությանը ծանոթացնելու, կուսակցության առջև դրված մարտավարական խնդիրներն և նպատակներն իրագործելու համար:

Քանի որ ՀՅԴ Արտասահմանի պատասխանատու մարմնի անդամների մի մասը 1921 թ. գտնվել է Կ. Պոլսում, իսկ Կ. Պոլսի հետ կապ պահելը Թիֆլիսից ավելի դյուրին էր, քան Հայաստանից, ակնհայտ է դառնում, որ ՀՅԴ Վրաստանի Կենտրոնական կոմիտեն լուրջ առաքելություն է իրականացրել ՀՅԴ ղեկավար մարմնի հետ կապ պահելու առումով: Գնահատելի է եղել Վրաստանում ապաստանած Հայաստանի Հանրապետության պետական գործիչներին, ինչպես նաև զոհված ու մահացած դաշնակցականների ընտանիքներին աջակցելու ուղղությամբ կատարված աշխատանքը:

Հրապարակվող նամակների բովանդակությունը հիմնականում Վրաստանում, ինչպես նաև ողջ Անդրկովկասում առկա քաղաքական իրավիճակի նկարագրություն ու վերլուծություն է: Նամակներում լուրջ անդրադարձ է արվում Անդրկովկասյան դաշնության կազմավորման գործընթացում վրացի և կովկասյան թաթար բոլշևիկների կողմից կազմակերպվող հակահայ դավադրություններին: Միաժամանակ ահազանգ է հնչեցվում Թուրքիայի պանթուրքական ծրագրերի գոյության մասին: Ներկայացվող նամակներում ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում նաև խորհրդայնացումից անմիջապես հետո Անդրկովկասի բնակչության սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական վիճակի մասին:

Վերջում ավելացնենք միայն, որ նամակների խորհրդապահական բնույթի պատճառով հաճախ դժվարացել ենք այնտեղ նշված անձանց ինքնությունը պարզելու գործում: Որոշ դեպքերում էլ իրենք՝ հիշատակվող անձինք, մեծ կարևորություն չեն ներկայացրել, ուստի և նրանց մասին պարզաբանում չի տրվել մեր կողմից:

Խաչատուր Ռ. Ստեփանյան

Պատմ. գիտ. դոկտոր

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 1

Միրելիք, վաղուց է, որ ձեզանից ոչ մի տեղեկություն չունենք: Այս պարագան մեզ բաւականին անորոշ կացութեան մէջ է դրել: Կան այստեղ թէ ընդհանուր քաղաքականութեան եւ թէ մեր Հայկական հարցի վերաբերեալ բազմաթիւ շշուկներ, սակայն մեզ որոշ ոչինչ յայտնի չէ, ուստի եւ մենք հնարաւորութիւն չունենք քաղաքական այդ նիւանսների³ վերաբերեալ մեր տեսակետներն ունենալ եւ նրանց կիրառել կեանքի մէջ: Չնայած նրան, որ մեր քաղաքական կշիռը օրը օրին ուժեղանում է եւ ծանրանում:

I կացութիւնը: Խորհրդային իշխանութիւնը՝ հաստատուած երկրում հակառակ աշխատաւոր մասսաների ցանկութեան, իրեն զգում է շատ խախուտ վիճակի մէջ: Չնայած նրան, որ Երեւանի կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է վարել մեղմ քաղաքականութիւնը եւ ժառանգել Դաշնակցութեան տակտիկան, սակայն նրան այդ չի յաջողվում: Մեծ քաղաքներում դրութիւնը շատ մեղմ է, իսկ գիւղերում ու արւաններում նախկին սանձարձակ քաղաքականութիւնն է տիրում, բռնութիւնը, թալան, ռեկլիզիցիա սովորական երեւոյթներ են: Վերջին ամիսների քաղաքացիական կռիւր վերածել է տեղական թայֆայական հաշիւներ մաքրելու զագիր ձեւերի; Ռուս բանակը՝ սոված ու կազմալուծուած, իր «Завоеватель»-ի⁴ հոգեբանութեամբ բռնացել է հայ գիւղացու վզին: Դժգոհութիւնը համատարած է: Մեծ ջիքեր են հարկաւոր ընդհանուր շարժումը կասեցնելու ու մասսաները լոյտալ պահելու համար: Խորհրդային իշխանութեան համար Տաճկաստանի պարտութիւնից յետոյ Տաճկաստանի, Տաճկահայաստանի և Մերձաւոր Արեւելքի կացութեան խնդիրն է դուրս, սրան կից և տաճկահայերին գրաւելու, իրենց կողմը քաշելու հարցն է իրենց շատ մտահոգում: Խոսում են (մեզ համար միանգամայն անհայտ եւ անսպասելի էր) բանակցութիւնների մասին, որը վարում է Պողոս Նուպարի և Զաւեն պատրիարքի կողմից⁵: Այս պարագան շատ է ոգելորում մեծամասնականներին: Ինչպէս միշտ, այնպես էլ այսօր հայ իրականութեան մէջ հակոտնեայ ոյժերը համախմբում են, բլօկ են կազմում Դաշնակցութեան դէմ: Գրեցէք ձեր վերաբերմունքը և ստոյգ տեղեկութիւններ տւեք այդ մասին:

Ռուսաստանում ստեղծուած ծանր ու երերուն կացութիւնը անդրադառնում է նաեւ ջղայնորէն տեղական մեծամասնականների վրայ, որոնք զգում են, որ կանգնած են նորանոր արհաւիրքների առաջ եւ կարող են պարպել Անդրկովկասը (իսկ ազգաբնակչութիւնը անհամբեր սպասում ու գուշակում է այդ օրը): Նոյն վիճակն է տիրում նաեւ Վրաստանում: Մասսաների խուլ դժգոհութիւն, կառավարութեան ջղայնութիւն: Սակայն վրացական շովինիզմը այստեղ էլ իր դերն է կատարում: Կատարեալ միաբանութիւն եւ միակերպութիւն է տիրում

3 Նրբություն (ռուսերեն):

4 Նվաճող (ռուսերեն):

5 Խոսքը Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուպարի և Կ. Պոլսի Զավեն Տեր Եղիայան պատրիարքի (1913-1922 թթ.) կողմից 1921 թ. ամռանը վարվող բանակցությունների մասին է:

բոլոր քաղաքական հոսանքների մեջ, երբ գործը հասնում է Վրաստանի անկախության եւ ժողովրդի գործիչների ապահովության: Վերջին ժամանակներուն բանտարկուեցին մօտ 48 մենչեիկ գաւառական եւ ականաւոր գործիչներ (այժմ մէկ մէկ բաց են թողնում նրանց), որոնց թում են՝ Լոմտարիձե, Ջիբլաձե, Ռամիշվիլի, Մախարաձե, Լորդկիփանիձե եւ ուրիշներ: Սակայն ինչպես Հայաստանում դաշնակցական, այնպէս էլ Վրաստանում տիրում, իշխում եւ ձնշում է մենչեիկեան տրամադրութիւնն ու հոգեբանութիւնը: Ազատագրել նրանցից ոչ մի կերպ չի յաջողվում մեծամասնականներին:

Քաղաքական տենդենց այժմ հետեւեալն են: Հայ մեծամասնականներն ու ռուսները (նկատում է նրանց երկուսի *alliance*-ը⁶) կանգնած են Կովկասեան ֆետերացիայի տեսակետի վրայ⁷: Վրացիները ամեն կերպ հակառակում են այդ միտմանը: Այս պարագայից առաջանում են բազմաթիւ թիրիմացութիւններ, ներքին ընդհարումներ ու փոխադարձ մեղադրանքներ: Ֆիլիպ Մախարաձէն⁸ իբրեւ թոյլ եւ ռուսֆիլ, հեռացւեց, նրան այժմ փոխարինում է Բոդու Մդիւանին⁹, որի փոխանորդ են նշմարում շովին վրացիներ կամ Ս. Քալթարաձէն¹⁰, կամ Էլիաւան¹¹: Այս փոփոխութիւնը օրերի խնդիր է: Երբ կովկասեան երեք

6 Ղաշինք (Ֆրանսերեն):

7 Անդրկովկասյան խորհրդային հանրապետութիւնների դաշինք ստեղծելու իրահանգ-գաղափարն ակնարկի ձևով տվել էր Վ. Լենինը դեռևս 1921 թ. ապրիլի 14-ին Ադրբեջանի, Վրաստանի, Ղաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստներին ուղղված նամակում: Ավելի ուշ ֆեդերացիա ստեղծելու գաղափարը «գարգացրին» Ալեքսանդր Մյասնիկյանը, Իոսիֆ Ստալինը, Գրիգորի Օրջոնիկիձեն: Անդրկովկասյան դաշնություն ստեղծելու գաղափարը, բացի ՀՍՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարից, բանարկվեց և հավանության արժանացավ նաև Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների համապատասխանաբար առաջին (հունվարի 23 – փետրվարի 1, 1922 թ.) և չորրորդ (փետրվարի 2-7, 1922 թ.) համագումարների կողմից: 1922 թ. մարտի 12-ին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչների լիազոր կոմիտեից հիմնադրեց Անդրկովկասի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը: Անդրդաշնության ստեղծումով զգալիորեն սահմանափակվեց հանրապետությունների ինքնիշխանությունը, որոշ ազդեցիկ ժողովրդական կոմիտեիները (ուժարկեցին, և նրանց գործառույթները համեմակվեցին Անդրկովկասյան Միության խորհրդին կից ստեղծված համապատասխան բաժիններին: 1922 թ. դեկտեմբերի 10-13-ին Բաքվում տեղի ունեցած Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը որոշեց Անդրկովկասի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը վերափոխել Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային խորհրդային Հանրապետության: Նույն համագումարը որոշեց նաև միավորման պայմանագիր ստորագրել ՌՍՖՍՀ-ի, Բելոռուսիայի, Ուկրաինայի հետ, ինչի կապակցությամբ լիազորվեցին իր կողմից ընտրված պատգամավորները: 1922 թ. դեկտեմբերի 30-ին խորհրդային չորս հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսը քննարկում և ընդունում է նախապես մշակված ԽՍՀՄ կազմավորման մասին հռչակագրի ու միութենական պայմանագրի նախագիծը:

8 Ֆիլիպ Մախարաձե (1868-1941) - վրացի ռուսամետ կոմունիստ գործիչ էր: 1921 թ. փետրվար-հուլիսին Վրաստանի Հեղկոմի նախագահ, 1922-1924 թթ.: Վրաստանի Կենտրոնական կոմիտեի նախագահ, 1924-1929 թթ.: Անդրդաշնության Պետականի նախագահ, 1929-1930 թթ.: Վրաստանի ժողովրդական կոմիտեի խորհրդի նախագահ: 1938-1941 թթ.: Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

9 Պոլկարպ (Բուդու) Մդիւանի (1877-1937) - վրացի կոմունիստ գործիչ: 1921 թ. փետրվար-մայիսին եղել է խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը քեմալական Թուրքիայում, 1921 թ. հուլիս - 1922 թ. մայիսին Վրաստանի Հեղկոմի նախագահը, 1922 թ. մարտ-դեկտեմբերին՝ Անդրդաշնության Միութենական խորհրդի նախագահը: Խորհրդային Վրաստանի անկախության ջատագույներից էր, Վրաստանի կոմունիստական կուսակցության ձախ ընդդիմության (նացիոնալ-ուկրոնիստներ) ղեկավարներից մեկն էր: 1937 թ. գնդակահարվել է:

10 Մուրդե Քալթարաձե (1885-1971) - վրացի կոմունիստ գործիչ: 1921 թ. փետրվարից 1922 թ. փետրվարին եղել է, Վրաստանի Հեղկոմի նախագահի տեղակալը, 1921 թ. փետրվար-մայիսին միաժամանակ Աջարիայի Հեղկոմի նախագահը, 1922 փետրվար-1923 հունվարին Վրաստանի ժողովրդական կոմիտեի խորհրդի նախագահը: Վրաստանի կոմունիստական կուսակցության ձախ ընդդիմությանը (նացիոնալ-ուկրոնիստներ) հարելու համար հեղացվել է կուսակցությունից: 1936 թ. ձերբակալվել է, հաջողվել է խուսափել գնդակահարությունից: 1940 թ. վերականգնվել է կուսակցության շարքերում:

11 Շավլա Էլիաւան (1883-1937) - վրացի կոմունիստ գործիչ: 1921-1922 թթ. եղել է Վրաստանի ռազմածովային ժողովրդական կոմիտարը, 1922-1923 թթ.: Անդրդաշնության ռազմածովային ժողովրդական կոմիտարը, 1923-1927 թթ.: Վրաստանի ժողովրդական կոմիտարների խորհրդի նախագահը, 1927-1931 թթ.: Անդրկովկասի ժողովրդական կոմիտարների խորհրդի նախագահը: 1937 թ. ձերբակալվել է և գնդակահարվել:

հանրապետությունների ներկայացուցիչները հաւաքեցին լուծելու սահմանափակների խնդիրը¹², ժողովը վերածեց դաշնակցական, մենչեիկեան և մուսաֆաթ պատկերի: Հայ-ադրբեջանական սահմանների նկատմամբ ոչ մի համաձայնութեան չեկան: Նարիմանովը¹³ հրաժարեց իր դեկլարացիայից, որով նա յայտարարում էր Ղարաբաղը միացած Հայաստանին, ասելով, որ սա տակտիկական քայլ էր դաշնակների դէմ ուղղւած¹⁴: Հայ-վրացական սահմանները որոշեցին այսպէս՝ Ախալքալակը՝ Վրաստանին, չեզոք գոտին՝ Հայաստանին մինչև Եսաֆալ-Այրում: Սակայն վրացիները իրականութեան մէջ ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս: Սրանից մի քանի ժամանակ առաջ մտադրութիւն ունէին անցնել Տաճկաստան եւ պատերազմական գործողութիւններ սկսել տաճկական բանակի դէմ: Այդ ժամանակ, ըստ Մոսկուայից ստացւած տեղեկութիւնների, Բեքիր-Սամիրի¹⁵ տեսակետը գերիշխել է, եւ քեմալիստները, համաձայնութիւն կնքելով յոյների հետ, մտնում են Փոքր Անտանտի մէջ¹⁶: Բայց վերջին, միանգամայն հակառակ այս տեսակէտին, նրանց այդ մտադրութիւնը կասեցւեց: Քեմալի պարտութիւնը համարում էին իրենց պարտութիւնը Արեւելեան քաղաքականութեան: Քեմալի պարտութիւնը տեղական մուսուլման տարրի մէջ առաջ է բերել խոր հիասթափութիւն Տաճկաստանի վերաբերմամբ և նոր քաղաքական կոմբինացիաների դուռ է բաց արել:

Ներկայումս Ադրբեջանը քայքայւած, կազմալուծւած եւ փլատակւած երկիր է ներկայացնում իրանից: Այն ռազմիկ շովին մուսաֆաթից ոչինչ, բացի յիշողութիւնից, չի մնացել: Գործիչները կամ գնդակահարւած են, կամ ցիրուցան եղած: Շատերը նրանցից եկել են հայ-թաթարական համաձայնութեան ու համագործակցութեան համոզումի: Նրանց ղեկավարն է հանդիսանում Խոսրով բեկ Սուլթանովը¹⁷, որը Բագուից փախել է իր եղբոր մոտ: Իսկ նրանց իտէալը՝

12 Խոսրովը 1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված Ռուսաստանի Կ(ք)Կ Կովկասյան բյուրոյի նիստի մասին է, որի նպատակն էր լուծել Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև առկա տարածքային վեճերը: Քննվեցին Լոռիի, Ախալքալակի, Ջաքաբալայի, Ջանգեզուրի, Արցախի հարցերը: Ի վերջո, որոշվեց Հյուսիսային Լոռիի, Ախալքալակը մտցնել Վրաստանի կազմի մեջ, իսկ Արցախը՝ Ադրբեջանի:

13 **Նարիման Նարիմանով (1870-1925)** - արդբեջանցի կոմունիստ գործիչ: 1920-1922 թթ. եղել է Խորհրդային Ադրբեջանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահը, 1922-1925 թթ. ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահը:

14 1920 թ. դեկտեմբերի 1-ին (Հայիեղկոմի 1929 թ. նոյեմբերի 29-ի Հայաստանը խորհրդայնացնելու վերաբերյալ հռչակագրի ընդունումից անմիջապէս հետո) Ադրբեջանի Հեղկոմը հռչակեց դեկլարացիա Ջանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու, իսկ Լեռնային Ղարաբաղի գյուղացիությանը ինքնորոշման իրավունք տալու մասին: Սակայն հետագայում Ադրբեջանի ղեկավարները հետ կանգնեցին իրենց որոշումից: Նարիմանովը ցնհկրկրեն ընդունեց, որ այդ հայտարարության հիմնական նպատակը Հայաստանի խորհրդայնացումն արագացնելն էր, և Խորհրդային Ադրբեջանը շարունակեց հայկական Ղարաբաղին տիրելու իր քաղաքականությունը:

15 **Բեքիր Սամիրի (1865-1933)** - ծագումով՝ օս (մահմեդական): Քեմալական Թուրքիայի քաղաքական գործիչ: Ծնողները Հյուսիսային Օսիայից գաղթել են Օսմանյան կայսրություն որպէս մուհաջիրներ: Դիվանագիտական ծառայություն է կատարել Ռուսաստանում Օսմանյան կայսրության դեսպանությունում, ապա եղել Վանի, Տրապիզոնի և այլ վիլայեթների նահանգապետ: 1919 թ. Անտանտի զորքերի Կ. Պոլիս մտնելուց հետո հարել է քեմալական շարժմանը և 1920-1921 թթ. եղել է քեմալականների արտաքին գործերի առաջին նախարարը:

16 Փոքր Անտանտը Չեխոսլովակիայի, Ռումինիայի և Հարավկովկասի միջև 1920-1921 թթ. ստեղծված ռազմաքաղաքական դաշինք էր, որի նպատակը Առաջին աշխարհամարտից հետո կենտրոնական և հարավարևելյան Եվրոպայում ուժերի հարաբերակցության պահպանումն էր: Դաշինքը վայելել է Ֆրանսիայի աջակցությունը: 1938 թ. Սյունիսենի համաձայնագրի կնքումով, որի արդյունքը եղավ Չեխոսլովակիայի գավառնը հիտլերյան Գերմանիայի կողմից, Փոքր Անտանտը դադարեց գոյություն ունենալ:

17 **Խոսրով բեկ Սուլթանով (1879-1943)** - 1918 թ. նորահռչակ Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության առաջին ռազմական նախարարն էր: 1919 թ. նշանակվել է Ղարաբաղ-Ջանգեզուրի այսպէս կոչված գեներալ-նահանգապետ, որը չի ընդունվել Արցախի և Ջանգեզուրի հայության կողմից: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո անցել է Թուրքիա:

Զանգեզուրն է, որն ի դեպ ասած, իր դիմադրությունները մեծ համարա ձեռք բերեց Ռուսաստանում, Կովկասում եւ մասնատրապէս թաթարների մէջ¹⁸: Ադրբէջանը, ըստ թաթար գործիչների, ինքնուրոյն չի կարող ազատագրել և երկար ժամանակ ի վիճակի չի լինի քաղաքական ֆակտորի դերում երեւան գալ Անդրկովկասում՝ անգամ ազատագրելուց յետոյ: Մնում է հարաւ-արեւմտեան թաթարութիւնը¹⁹, որը բնաւ չի տուժել վերջին տարիների քաղաքական վայրիվերումների ընթացքում: Ուստի եւ նրանց վրայ էլ կատարում է Քեազիմ Կարաբեքիրի²⁰ և տեղական թաթարների *савка*-ն²¹: Վերջին ժամանակներս Ախալցխայի, Աջարիայի, Փոցխովի, Արդահանի և Կարսի շրջաններում այդ ուղղութեամբ տենդային աշխատանքներ են կատարում: Յայտնի դէմքեր՝ Սէրվեթ բեկը, Օմար էֆենտի Ֆակը (այժմ մեծամասնական եւ Վրաստանի Յեղկոմի էլ անդամ), Թէֆիկ բէյը, բոլոր Մաչաբելիները²² աշխատանքներ են թափում այդ շրջանում: Տաճկական ասկերներն են խումբ-խումբ ցրում եւ տեղաւորում են գիւղերում՝ իբրեւ միւրիդիներ²³: Կարաբեքիրի օրինակութեամբ: Մի խօսքով 1919 թականի Ադրբէջանի պատմութիւնը կրկնում է: Նախատեսեք այս վտանգը: Կարսը մինչեւ օրս չի դատարկւած, սահմանը Արփաչայն է, Նախիջեւանում գործում է տեղական մուսուլմանական յեղկոմը՝ փաստօրէն անկախ եւ անենթակայ:

Յայտնում եմ տեղական նորութիւնները.

1. Գառնիկ Շահինեանը, որ Զանգեզուրից եկել էր իբրեւ ներկայացուցիչ Երեւան, անցաւ մեծամասնականների կողմը, եւ մի բաց հրաժարականով մեղադրեց թէ ներկայ, թէ անցեալ «աւանտիւրիստ գործունէութիւնը»:

2. Արմենակ Մամիկոնեանը, Արշակ Մինասարեանը յայտարարեցին իրենց ոչ դաշնակցականներ:

3. Զօրի Զօրեանը²⁴, Արտաշէս Վանցեանը²⁵, Խիկարը²⁶, Ղարիբջանեանը, Արտաշէս Կիրակոսեանը, Զաւեն Կորկոտեանը – կօմունիստներ: Վրաստանի կազմակերպութիւնից անջատուեցին 6-9 հոգի:

4. Սուրեն Մէլիքեանը ամսոյս 9-ին գնդակահարուեց իբրեւ Անտանտի շպիոն²⁷:

18 Նկատի ունի Զանգեզուրի 1919-1921 թթ. հերոսական ինքնապաշտպանությունը:

19 Նկատի ունի Արարատյան դաշտավայրի, Նախիջեւանի, Կարսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Բաթումի թուրք-թաթար բնակչությունը:

20 **Քարաբեքիր (1882-1948)** - 1918-1919 թթ. եղել է 1-ին, 2-րդ, 15-րդ թուրքական բանակային կորպուսների հրամանատար, մասնակցել Երզնկայի, Երզրումի և Կարսի գրավմանը, հետագայում՝ Թուրքիայի Արևելյան ռազմաճակատի գործերի հրամանատար: 1920 թվականի սեպտեմբերին թուրքական զորքերը Կարաբեքիրի գլխավորությամբ ներխուժել են Արևելյան Հայաստան: Գլխավորել է թուրքական պատվիրակությունները 1920 թ. Ալեքսանդրապոլի և 1921 թ. Կարսի բանակցություններին:

21 Խաղաղույթ:

22 Մաչաբելիները վրացական ազնվական տոհմ էին:

23 Մահմեդական սուֆիների շրջանում որևէ իմամի կամ շեյխի մոլեռանդ հետևորդ:

24 **Զօրի Զօրյան (1885-1943)** - ՀՅԴ Ախալցխայի կազմակերպության ակաճավոր ներկայացուցիչ: Նրա օրոք Ախալցխայում հիմնադրվել է տպագրվել է «Շարժում» (1917-1918) թերթը: 1918 թ. ղեկավարել է Ախալցխայի ինքնապաշտպանությունը և կանխել քաղաքի հայ բնակչության կոտորածը: Ախալցխայում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո տեղափոխվել է Թիֆլիս, անցել Կոմունիստական կուսակցության շարքերը: 1937 թ. ձերբակալվել է, ազատվելուց հետո (1940 թ.) ապրել և աշխատել է Թբիլիսիում:

25 **Արտաշես Վանցյան** - եղել է Հայաստանի Հանրապետության երկրորդ նորիդարանի (1919-1920 թթ.) պատգամավոր: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է Թիֆլիս:

26 Կեղծանուն է:

27 Լրտես:

5. Թէ՛ Հայաստանում, թէ՛ Վրաստանում բանտարկւեցին 30-35 ընկեր:
6. Ադրբէջանը այստեղ է եւ աշխատում է Չէկայի²⁸ գլուխ կանգնել, սակայն վրացիները հակառակ են:
7. Չէզոք գոտիում²⁹ գնդակահարւեց Սենիկը իր երեք եղբայրներով ու 13 տղաներով: Սենիկը մեծամասնականների գալու առաջին օրերին իրեն յայտարարեց մեծամասնական եւ գնաց Չէզոք գոտի պոլիտոմէլե-ի³⁰ պաշտոնեայ:
8. Միշա Արզումանեանը, Բաբալեանը կենդանի են եւ գերիների ցանկում³¹ ուղարկւած յուլիս 8-ին:
9. Գեներալ Օսիպեանը մեռաւ սրտի պայթիւնից:
10. Նոյն հիւանդութիւնից մեռաւ նաեւ Ս. Մելիք-Ազատեանը:
11. Նազարբեկեանը³² Մոսկայում է:
12. Սիլիկեանը վերադարձել է Թիֆլիս:
13. Նոյնպէս վերադարձել է Թիֆլիս Ռեազանից³³ Արսեն Շահնազեանը³⁴ եւ մի խումբ Դրոյի սպաները՝ Մոսկայից:
14. Մանասի, Չուբարի, Ջաղէթեանի, Գրիգոր Յակոբեանի սպանութիւնը ձիշտ է:
15. Թումի Թումեանը նոյնպէս յայտարարել է իրեն կոմունիստ:
16. Կեանքի պայմանները սուղ են: Հացի գրանքան³⁵ արժէ 4500 ռ., միսը՝ 15000 ռ., միրգը՝ 5000 ռ., թէյը՝ 3500 ռ.:

28 Ռուսերեն чрезвычайная комиссия (Արտակարգ հանձնաժողով) բառերի հապավումն է: Ստեղծվել է խորհրդային Ռուսաստանում 1917 թ. դեկտեմբերին: Պաշտոնական անվանումը եղել է Հակահեղափոխության, սաբորտաժի և սպեկուլյացիայի դեմ պայքարի համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողով: Անդրկովկասի խորհրդայնացումից հետո Արտակարգ հանձնաժողովներ ստեղծվեցին նաև Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում: Այս հանձնաժողովները գոյություն ունեցան մինչև 1922 թ.:

29 Հայ-վրացական պատերազմից հետո՝ 1919 թ. հունվարի 9-17-ին, Թիֆլիսում անգլիական բանակի գնդապետ Ռ. Սոյուարտի նախագահությամբ տեղի ունեցավ հաշտության խորհրդաժողով, որը որոշեց ստեղծել Լուռու չէզոք գոտի մինչև հարցի վերջնական կարգավորումը: Չէզոք գոտու հյուսիսային սահման էր դառնում այն գիծը, որտեղ կանգնած էր վրացական զորքը պատերազմի վերջին օրը: Փաստորեն այս համաձայնությունը բխում էր վրացիների շահերից, որովհետև չէզոք գոտի էր հաստատվում այն տարածքներում, որոնք արդեն զբաղեցված էին հայկական զորքի կողմից և որտեղի բնակչության բացարձակ մեծամասնությունը հայեր էին: Չէզոք գոտին կառավարելու էր անգլիացի գեներալ-նահանգապետը՝ հայ և վրացի տեղակալներով:

30 Քաղաքական բաժին:

31 Խոսքը 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ թուրքերի կողմից գերված հայերի մասին է: Հոկտեմբերի 30-ին թուրքերը գրավեցին Կարսը և գերեցին մոտ 3.000 զինվորների և զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան անձանց, որոնց որոնց թվում էին նաև զորավարներ Բեկ-Փիրումյանը, Արարատյանը, Ղազարյանը, գնդապետ Վեթիլյանը, առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու որդին, Հայաստանի նախարարներից Արտաշես Բաբայանը, հետագայում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս դարձած Գարեգին Հովսեփյանը:

32 **Թովմաս Նազարբեկյան (1855 -1931)** - ցարական բանակի գեներալ-մայոր: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի, ապա Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: 1915 թ. ապրիլի 16-18-ին Դիլմանի ճակատամարտում պարտության է մատնել Խալիլ բեյի դիվիզիային, որի համար արժանացել է Գեորգիական խաչի 4-րդ աստիճանի շքանշանի: 1917 թ. նշանակվել է նոր կազմավորված Հայկական բանակային կորպուսի հրամանատար: Թովմաս Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարությամբ հայկական զորքերը 1918 թ. մայիսի վերջին կասեցրել են թուրքերի առաջխաղացումը Դարաքիլիսայի ուղղությամբ: Հետագայում շարունակել է ծառայությունը Հայաստանի Հանրապետության բանակում: 1919 թվականի մարտի 25-ից ՀՀ զինվորական խորհրդի նախագահ և զորքերի հրամանատար: 1919 թվականի հուլիսի 15-ին նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի կոչում: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1921 թ. հունվարին մի խումբ հայ և ռուս սպաների հետ աքսորվել է սկզբում Մոսկվա, ապա Ռյազանի համակենտրոնացման ճամբար: Վերադարձից հետո ապրել է ծայրահեղ աղքատության մեջ: Գրել է հուշեր: Մահացել է Թիֆլիսում:

33 Ռուսական Ռուսլան քաղաքում էին պահվում Հայաստանի խորհրդայնացումից հետո աքսորված Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան զինվորականները:

34 **Արսեն Շահնազյան** - ծնունդով Ախալքալաքից: Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր էր: 1919 թ. մարտին Հայաստանի Հանրապետության կառավարությունը նրան նշանակեց Սյունիքի ընդհանուր կոմիսար (նահանգապետ): 1920 թ. եղել է հաղորդակցության փոխնախարար: Բոլշևիկների կողմից հալածվեց ու ձերբակալվեց, ապա՝ աքսորվեց Սիբիր և անհետացավ սիբիրյան դաժան աքսորավայրերում:

35 Գրվածքան ծանրության հին ռուսական չափման միավոր է, որ հավասար է 409,5 գրամի:

17. Թոյլ են տւել մասնաւոր արեւտուր, սակայն այնպիսի սուկալի հարկեր են դրել, որ մանր վաճառականութիւնը տնքում է հարկերի տակ:

18. Թիֆլիսը պատրաստ է վճարել 25 միլիարդ 48 ժամուայ ընթացքում: Արդեն այդ հողի վրայ բանտարկութիւններ են տեղի ունեցել: Բանտարկւած է Արամեանը, ձկնավաճառ Օսիպովը եւ ուրիշներ:

19. Վերջին ժամանակներս ծառայողներին պայոկ³⁶ չեն տալիս:

20. 25 վագոն հաց այստեղից արդեն տեղափոխել են Ռուսաստան:

21. Ընդհանրապէս կահկարասից սկսած ամեն ինչ տեղափոխում են:

22. Մանթաշեանի տունը (նախկին Մուխրանսկիների հայկական ակումբը Գոլովինսկիի վրայ) այրեց³⁷:

23. Հրդեհները սովորական երեւոյթ են:

24. Քաղաքում ջրի պակասութիւն է, օրերով ջուր չկայ:

25. Թալանը եւ գողութիւնը համատարած է:

26. Գիշերները հրացանաձգութիւն է տեղի ունենում:

27. Խոլերան պակասել է, իսկ Հայաստանում բնաւ չի էլ եղել:

Ընկերական ջերմ բարեւներով՝

Ի դիմաց ԿԿ-ի Սուրեն

13.8.1921

ԼՅԳ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 6 (6 էջ):

Բնագիր: Ձեռագիր:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 2

Սիրելի՛ք,

Կազմակերպական աշխատանքները մեզ մօտ յաջող կերպով են ընթանում: Ունենք Կենտրոնական Կոմիտէ Երեւանում, Ալեքսանդրապոլում եւ տեղական կոմիտէներ համարեայ բոլոր վայրերում, իսկ գիւղերում՝ վստահելի խմբակներ: Այս կազմակերպութիւնների հետ մենք կանոնաւոր կապ ենք պահպանում եւ ընդհանուր աշխատանքներ վարում: Մեր բոլորի տեսակետն է՝ կազմակերպութիւնը պահել սաղմնային, բայց ուղիղ եւ կազմակերպ վիճակի մէջ, որպէսզի չվտանգենք նրան: Որքան մեր դէմ պայքար, լուտանք են թափում, այնքան մեր շարքերը բարձր յեղափոխական տրամադրութիւն են պահպանում: Մտադրութիւն ունենք մօտ ապագայում երկրի կազմակերպութիւնների կօնֆերանս գումարել, իսկ մինչ այդ ընդհանուր ղեկավարութեան ղեկը պահում ենք մեր ձեռքերում: Այդ մեզ միանգամայն յաջողում է, որովհետեւ մեծամասնականները մարդիկ չունեն, իսկ ժողովուրդը մեզ հետ է: Կան ամբողջ վայրեր ու շրջաններ (անուններ չեմ ուզում տալ), բայց առաջնակարգ

36 Օրապահիկ սնունդ:

37 Թիֆլիսի կենտրոնական Գոլովինսկի (այժմ՝ Ռուսթավելի) պողոտայի վրա հայ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշեանի կառուցած շենքերից մեկի մասին է խոսքը, որը գործել է որպէս հայկական ակումբ:

նշանակութիւն ունեցող վայրեր, ուր բացարձակապէս մենք ենք իշխում մեծամասնական պետական օրգանների միջոցով; Տրամադրութիւնները հաստատապէս բարձր են եւ ռազմական: Ղեկավարութիւնը ապրում է անլեզալ (Հայաստանում) և կիսալեզալ (Վրաստանում): Աշխատանքի ընթացքում տուինք մի քանի գոհեր: Բանտարկութիւններ տեղի ունեն: Բռնուց մեր երիտասարդական խմբակը Թիֆլիսում: Բաթումում երկու օր առաջ բանտարկուցին մեր ընկեր Բ. Թովչեանը եւ Կ. Պօլսից եկած ընկեր Միհրանը: Նրանց վիճակը վտանգաւոր եւ կրիտիկական է: Գնդակայարուած են ընկ.[երներ] Սուրէն Մէլիքեանը, Բիճ Լեւոնը: Կապ ենք հաստատել Պարսկաստանի եւ Մակուի հետ: Յաջողւել է կազմակերպական խմբեր ստեղծել երկար քայքայումից յետոյ Հիւսիսային Կովկաս՝ Արմաիրում, Եկատերինոդարում³⁸, Մայկոպում եւ Վլադիկաւկազում: Ընկերներ ենք դրկում Ղարաբաղ եւ Ադրբեջան³⁹ նորից քայքայուած կազմակերպութիւնը վերականգնելու համար: Շատ դժուար է այնտեղ Բագում, որովհետեւ հայ բանտրութիւն չի մնացել: Բոլոր վայրերում, ուր հնարաւոր է թափանցել, մենք աշխատում ենք ընկեր ուղարկել:

Սակայն մեր այս աշխատանքները դանդաղում են դրամի պակասութեան պատճառով: Ձեր ուղարկած եւ մեր այստեղ պարտք առած դրամները մենք արդեն ծախսեցինք՝ բաժանելով կազմակերպութիւնների եւ ուրիշ կուսակցական նպատակների վրայ: Ընկերներ, համապատասխան քիջէ է մեզ հարկաւոր, որպէսզի աշխատանք վարենք: Դրամները բաժանում եւ ծախսում ենք հետեւեալ կերպով. 1) բաժանում տեղական աշխատանքների համար կազմակերպութիւնների միջեւ, 2) կապ պահպանելու համար ընկերներ ուղարկել բոլոր վայրերը, սա մեզանից խլում է հսկայական գումարներ, 3) բանտարկուած ընկերներին նպաստել, 4) փախած եւ անլեզալ ընկերներին պահել, ունենք 63 հոգու ցուցակ, որոնք թաքնուած վիճակում են, 5) գործող ընկերներին եւ մարտական ընկերներին նպաստել, 6) մի շարք ընկերների ընտանիքներին [նպաստել], որոնք սովամահ վիճակի մէջ են: Ինչպէս տեսնում եք, դրամը շատ քիչ է, իսկ գործը մեծ եւ դրամ պահանջող:

Այս ի նկատի ունենալով ձեր պարտականութիւնը պիտի լինի համարեք առաջին իսկ երկրին գումար հասցնել: Հակառակ դէպքում մեր աշխատանքները կը տարուին թոյլ եւ կազմակերպութիւնը կը քայքայի: Պահանջեք մեզանից գործ եւ դուք էլ ձեր կողմից աջակցեցեք: Որքան հնարաւոր լինի այստեղ կազմակերպել եւ աշխատել պահպանել, այնքան մեր բոլոր ընկերները աւելի օգտուին եւ իրենց պարտականութիւնները կկատարեն բոլոր վայրերում՝ հաւատարիմ յեղափոխական սկզբունքներին եւ անցեալին:

13.8.1921

ՀՅԴ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 18 (3 էջ):

Բնագիր: Ձեռագիր:

38 Այժմ Կրասնոդար:

39 Թե Արցախում, թե Բաքվում հնարավոր է եղել վերականգնել ՀՅԴ տեղական կազմակերպումները, որոնք ընդհատակյա գործել են մինչև 1933 թ.:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 3

ԱՐԽԻՎ

Սիրելի՛ք,

Յայտնում ենք ձեզ վերջին անցքերի ու քաղաքական կացութեան մասին:

Հայաստան:

Հայաստանում մեծամասնական կուսակցությունը միանգամայն որդեգրել է նախկին կառավարության քաղաքականությունը ներքին խնդիրների վերաբերմամբ եւ այդ ձեռով յոյս ունի գրաւել իր կողմը ազգաբնակչութեան համակրանքը: Դէպի գիւղացիությունը վերաբերմունքը շատ մեղմ է, նախկին բռնությունների նշոյլն անգամ չկայ⁴⁰: Սակայն, չնայած դրան, գիւղացիությունը ոչ միայն բացասական, այլ անգամ թշնամական դիրք ունի հանդէպ մեծամասնականները: Աւելին, սպասում է այն օրունը, երբ հնարաւոր կլինի զէնքի ոյժով հեռացնել նրանց երկրից: Ինտելլիգենցիային նոյնպէս աշխատում են գրաւել իրենց կողմը: Լաւագոյն պայոյկներով, զանազան նպաստներով, լայն ծրագրած ձեռնարկներով, որոնց վրայ դրամ չի խնայում: Նրանք աշխատում են այդ տարրը գրաւել իրենց կողմը: Օրինակ՝ 300 միլիոն բաց է թողնւած նկարչական ընկերութեանը, դերասանական խումբը լիառատ ապրում է Երեւանում: Օգուելով Դաշնակցութեան ծանր վիճակից գաղութներում, մեծամասնականները որոշել են ամեն կերպ պայքարել Դաշնակցութեան դէմ եւ գրաւել իրենց կողմը գաղութների համակրանքը: Այդ միասխայով հայկական վալիտայով մեկնեց ձեզ մոտ Դ. Շահվերդեանը⁴¹, պայքարում են Ամերիկա անցնել նաև Կարինեանը⁴² և Ս. Փիրումեանը⁴³: Բացի դրանից Հայաստանում մօտ օրերս գումարում է անկուսակցական գործիչների համագումար (փաստօրէն հակադաշնակցական) Յով. Թումանեանի ղեկավարութեամբ, որ պէտք է կոչ անի գաղութներին՝ համարել մեծամասնականներին հարազատ հայ շահերին կուսակցութիւն եւ հրաւիրել լայն աջակցութիւն ու համագործակցութիւն ցոյց տալ նրանց: Նոյն իմաստով պատրաստում են գումարել տաճկահայ համագումար, որը պէտք է ընդունի բանաձեւ, որով տաճկահայ աշխատաւորությունը իր բոլոր յոյսերը կապում է մեծամասնականների հետ՝ Հայաստանի ազատագրման խնդրում: Սակայն այս համագումարը բաւականին ուշանում է, որովհետեւ մեր ազդեցությունը տաճկահայ մասսաների վրայ շատ մեծ է: Միւս կողմից մեծամասնականները աշխատում են երկիր մտցնել գրքեր, պատկերներ, կահաւորում, մի խօսքով ինչ որ հնարաւոր է

վէմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) ցարի, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021

40 Այս մեղմացումները հիմնականում պայմանավորված էին 1921 թ. Փետրվարյան ապստամբությամբ (մանրամասն տես **Ստեփանյան Խ.**, Փետրվարյան ապստամբության պատճառներն ու հետևանքները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թվականներ), Եր., 2017):

41 **Դանուշ Շահվերդյան (1882-1941)** - հայ բոլշևիկ գործիչ: 1921 և 1924-1928 թթ. եղել է Խորհրդային Հայաստանի և Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության առևտրական ներկայացուցիչը Թուրքիայում, 1922-1923 թթ.: Խորհրդային Հայաստանի արդարադատության ժողկոմ, ժողկոմխորհրդի նախագահի տեղակալ:

42 **Արտաշես Կարինյան (Գաբրիելյան, 1886-1982)**-1907 թվականից եղել է ՌՍԴԲ կուսակցության շարքերում: Մասնակցել է 1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը: 1918 թ. եղել է Բաքվի կոմունայի արդարադատության կոմիտեի անդամ: Այնուհետև աշխատել է Մոսկվայում հայկական գործերի կոմիտեի ատոմում: 1921 թ. եղել է Խորհրդային Հայաստանի արդարադատության ժողկոմ, 1923-1924 թթ.: Կենտգործկոմի նախագահի տեղակալ, 1924-1928 թթ.: նախագահ: Հետագայում հիմնականում զբաղվել է գիտական գործունեությամբ:

43 **Սարգիս Փիրումյան** - բոլշևիկ գործիչ, ով 1920-ական թվականներին հիմնականում զբաղված էր սփյուռքահայության հանդեպ Խորհրդային Հայաստանի իշխանության քաղաքականության մշակմամբ և գործադրմամբ:

գնել Վրաստանում: Եւ շնորհիւ սահմանների վերացման այս բանը նրանց յաջողում է: Այս է ընդհանուր առմամբ այսօրուայ քաղաքական գիծը Հայաստանում, որը կարելի է ձեռակերպել հետեւեալ բառերով՝ ազգաբնակչութեան սիրաշահումն ու հայ իրականութեան մէջ դիրքեր գրաւել ու նրան ամրացնել:

Վրաստան:

Ընդհանուր առմամբ Վրաստանում վարում է նոյն տիպի քաղաքականութիւն, որը վերջին ժամանակներս թեքում է դէպի ձախ: Արդէն տրուած է պարենտուրք (продналог)⁴⁴ գիւղացիութեան վրայ, իսկ քաղաքներում 30 միլիարդի տուրք բուրժուազիայի վրայ, որը գանձում է գազանային ձեւերով: Վրաց մասսաները շարժողութեան մէջ են, հակամեծամասնական տրամադրութիւնը օրը օրին գարգանում ու ընդարձակում է: Տիրում է բացայայտ դժգոհութիւն, որը կարող է բռնկուիլ ակտիւ արտայայտութիւնների: Ըստ այսմ վրաց հասարակական եւ քաղաքական խավերն ալ վարում են իրենց քաղաքականութիւնը: Մենշեւիկները միանգամայն վարկաբեկած են, մասնաւորապէս Վրաստանից դուրս գտնուող խմբակը: Սրանց դէմ ուժեղ պայքար են մղում բոլոր հոսանքները, որոնք միացել են հետեւեալ պլատֆորմի շուրջը՝ Վրաստանի ազատութիւն եւ դեմոկրատական կարգեր, փոքրամասնականների՝ հայերի, արխազների, օսերի, աջարացիների հետ համագործակցութիւն, յոյս չդնել եւրոպական ակտիւ օգնութեան վրայ, այլ տեղում տեղական ոյժերով երեւան գալ, համագործակցել եւ սերտ կապել Հայաստանի հետ: Այս իսկ պատճառով նրանց վերաբերմունքը շատ բարեկամական է, որովհետեւ մեր կուսակցութեանը համարում են աւելի փորձառու յեղափոխական խնդիրներում: Համաձայնութեան հաստատուն հիմքեր կան: Եւ այս բոլոր վրացական խաւերը լցւած են զարհուրելի ատելութեան դէպի մենշեւիկները եւ նրանց քաղաքականութիւնը: Կառավարութիւնը խիստ հետապնդում և բանտարկում է մենշեւիկներին: Բացի նրանից, որ բոլոր ակաւոր գործիչները ձերբակալւած են, այս օրերում Մցխեթում գումարւած էր կուսակցական համագումար, որը նույնպէս ձերբակալւեց: Այս օրերս Բաթումում 8 մենշեւիկներ գնդակահարւեցին:

Միւս շրջանները: Ադրբէջանում ոչ մի նորութիւն չկայ: Սուլթանովի բանակի մնացորդները արդէն լիկւիդացիայի են ենթարկւել: Հիւսիսային Կովկասում նախկին մեծամասնական հրամանատար Լօզինովը այժմ ապստամբների հետ, նրա ազդեցութիւնը օրը օրին մեծանում է, սպառնում է երկաթուղային գծին:

Մուսուլմանական շարժում: Տաճկական ազենտներով⁴⁵ վխտում է ամբողջ Անդրկովկասը, մասնաւորապէս Բաթումը, Թիֆլիզը և Բագուն: Աջարիայում եւ Ախալցխայի շրջանում աշխատանքները տենդային կերպով շարունակ-

44 Խոսքը «ռազմական կոմունիզմի» քաղաքականության մասին է, որը Վրաստանում ավելի ուշ մտցվեց, քան Հայաստանում: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը տնտեսական միջոցառումների մի ամբողջ համակարգ էր, որը վերաբերում էր ոչ միայն գյուղատնտեսությանը, այլև արդյունաբերությանն ու առևտրին: Ելնելով ռազմական կարիքներից արտադրական ձեռնարկությունները, այդ թվում և մանր ու միջին, պետականացվում էին: Հետագայում անդրադառնալով այդ հարցին՝ Վ. Լենինը հատկապես ընդգծեց, որ սխալ թոյլ տրվեց, երբ «ռազմական կոմունիզմի» ժամանակ ազգայնացվեցին նաև մանր ձեռնարկությունները (տե՛ս **Գեղամյան Գ.**, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում նկատի տարիներին (1921-1936), Եր., 1978, էջ 28):

45 Գործակալ:

ում են: Ենթադրություն կայ, որ այստեղ ստեղծում է բազայ, Մուստաֆա Քեմալի⁴⁶ պարտությունից յետոյ Տաճկաստանը խորհրդային յայտարարելու, որի համար էլ այս բոլոր աշխատանքները: Բայթում է Խալիլ փաշան⁴⁷ և անգամ Է. . . ը⁴⁸ (դեռ ստուգված չէ, բոլոր միջոցները գործադրում ենք ընդհանուր ժողովի որոշումը իրագործելու⁴⁹, եթե նա լինի Բայթումում կամ Անդրկովկասում): Միս կողմից մեծամասնականների այստեղի պատասխանատու շրջանները դեռ իրենց վերաբերմունքը դեպի Տաճկաստանը չեն որոշել: Կայ երեք հոսանք՝ մեկը հակատաճկական է և ակտիվության կողմնակից՝ հայերի ղեկավարությամբ, երկրորդը՝ 1914 թականի սահմանների գրաման կողմնակից է երրորդը՝ համագործակցության է Կարմիր Տաճկաստան յայտարարելու կողմնակից: Այս հարցի վերջնական լուծումը կախած է Մոսկայից, ուր է մեկնել են Օրջոնիկիձեն⁵⁰ և Միասնիկեանը⁵¹ (վերջինս Հիւսիսային Կովկասի կարեւոր գործչի հետ տեսակցելու): Միս կողմից մեծամասնական բանակը օր օրի վրայ հալում է, Վրաստանում 4000-ից ավել չէ, Հայաստանում՝ 6, 7 հազար: Սովը է հիւժուժությունը միանգամայն կազմալուծում են նրանց:

Կուսակցական: Մեր աշխատանքները օրը օրին լայնանում է Ծաւալում են: Չենք ուզում շատ տարածել, որպէսզի անյաջողության չմատնուիք: Մօտ օրերս Կ. Կոմիտէների համագումար ենք հրաւիրել, որի որոշումները վերջապալուն պէս ձեզ կուղարկենք: Երեւանում մի շարք բանտարկություններ տեղի

46 Մուստաֆա Քեմալ - Թուրքիայի Հանրապետության հիմնադիր:

47 **Խալիլ փաշա (1882-1957)** - թուրք զինվորական գործիչ, գեներալ, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Էնվերի հորեղբայրը: 1916-1918 թվականներին եղել է Միջագետքում օսմանյան 6-րդ բանակի հրամանատարը: 1918 թ. մարտին Նուրի փաշայի հետ Ատրպատականում բանակցել է մուսավաթականների հետ, ինչի արդյունքում որոշվել է, որ մուսավաթականները աջակցեն թուրքական բանակին գրավելու Արևելյան Անդրկովկասը: 1918 թվականի մայիսի 15-ին Խալիլի գործերը զավթել են Ալեքսանդրապոլը (այժմ Գյումրի), այնուհետև՝ արշավել Բաթու և, գրավելով այն (1918 թ. սեպտեմբեր), կոտորել տեղի ավելի քան 30 հազար հայերի: 1920 թվականի մարտին Խալիլը, Նուրի փաշան և մուսավաթականները հրդեհել են Արցախի Շուշի քաղաքը, կոտորել հայ բնակչությանը:

48 **Էնվեր փաշա (1881-1922)** - երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից էր, 1913-1918 թթ. եղել է Օսմանյան կայսրության ռազմական նախարարը: Հայոց ցեղասպանության զխավոր կազմակերպիչներից է և իրականացնողներից էր: 1921 թ. անցել է Միջին Ասիա, որտեղ զխավորել է բասմաչների գործողությունները: Սպանվել է խորհրդային զորքերի հետ բախումներից մեկի ժամանակ 40-ամյա տարիքում արցախցի հրամանատար Հակոբ Մելքումյանի կողմից:

49 Խոսքը 1919 թ. աշնանը Երևանում կայացած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշման մասին է, ըստ որի հայ ժողովրդի դեմ ցեղասպանություն ծրագրած և գործադրած դաժիճները պետք է պատժվեն: Քննարկվել է 650 մարդկանց անուն, որոնցից ընտրվել են 41 զխավորները, այդ թվում Էնվերը:

50 **Գրիգորի (Սեբոզ) Օրջոնիկիձե (1886-1937)** - ազգությամբ վրացի բոլշևիկ գործիչ: Ակտիվորեն մասնակցել է 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջմանը, ապա՝ քաղաքացիական պատերազմին: 1920 թ. ապրիլից եղել է ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ, Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում խորհրդային իշխանության հաստատման ակտիվ մասնակից: 1922-1926 թթ. եղել է կուսակցության Անդրերկրյան առաջին քարտուղարը, ՀամԿ(Բ)Կ Հյուսիսկովկասյան երկրորդի առաջին քարտուղարը:

51 **Ալեքսանդր Մյասնիկյան (1886-1925)** - ծնվել է Նոր Նախիջևանում: Հայ բոլշևիկ պետական գործիչ: 1917 թվականի սեպտեմբերին ընտրվել է Բելառուսիայի կոմկուսի կենտկոմի քարտուղար, հետագայում՝ Արևմտյան ռազմաձևակառուցի հրամանատար: 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընտրվել է Բելառուսիայի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի կենտրոնական բյուրոյի, ապա՝ Բելառուսական ԽՍՀ կենտգործկոմի նախագահ: 1919 թվականին տեղափոխվել է Մոսկվա, որտեղ ընտրվել է Մոսկվայի կոմկուսի քաղաքային, ապա՝ նահանգային կոմիտեի քարտուղար: 1921 թ. հունվարին նշանակվել է խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի առաջին նախագահ և ռազմական գործերի ժողկոմ: 1922 թ. մարտին Անդրկովկասի խորհրդային Ղաշնային Սոցիալիստական Հանրապետության կազմավորումից հետո եղել է ղաշնության գործկոմի նախագահ, ապա՝ ՌԿ(Բ)Կ Անդրերկրյան առաջին քարտուղարը: Չոխվել է 1925 թ. մարտի 22-ին Թիֆլիսի օդանավակայանում օդանավի վթարից, որը մի տեսակետի համաձայն կազմակերպված է եղել Վրաստանի Չեկայի նախագահ Լավրենտի Բերիայի կողմից:

ունեցան մտաւորապէս 35 ընկերների, որոնց մէջ են Ս.Թորոսեանը⁵² եւ բժ. Օնիկ Միքայէլեանը: Ալէքսանդրապոլում բանտարկւել են Լօռեցեանը, նրա եղբայրը, Մխիթարը, բժ. Աւետիսեանը եւ մի քանի ուրիշ ընկերներ, 9 հօգի: Մեր բանտարկուածներին բաց չեն թողնում: Բ-րի գործը բարդանում է, վախենում ենք նրա վիճակից: Դրոյին⁵³ թոյլ չեն տւել վերադառնալու Հայաստան: Արշակ Մալխասեանը ամնխատիպի⁵⁴ ենթարկւեց եւ այժմ ազատ է, իսկ Խորեն Համասփիւռը այս օրերս անցնելու է Պօլիս, սակայն առանց վիզա ունենալու, ուստի դուք նախապատրաստական աշխատանքներ վարեցեք, որպէսզի պօլսական իշխանութիւնը թոյլ տայ նրան Պօլիս մտնելու:

Մեր աշխատանքներին սաստիկ խանգարում է դրամական ծանր վիճակը Հայաստանի կուսակցական մարմինները առանց կոպեկ են նստած, եւ աշխատանքը դանդաղում է, բանտարկուածները մնում են օրերով քաղցած, որովհետեւ դրամ չենք կարող հասցնել նրանց: Մեր աշխատանքները պատրաստում են հետեւեալ կերպով, եւ այս նպատակների համար հարկատու են խոշոր գումարներ:

1. Կուսակցական մարմինների ընթացիկ աշխատանքներ Հայաստանում, Վրաստանում, Հիւսիսային Կովկասում (մենք առաջ բերինք կազմակերպութիւն Արմաիրում, Մոզդուկում, Ռոստովում, Վլադիկովկասում), Ադրբեջանում, Պարաբադում, ուր ուղարկել ենք մեր վստահելի երկու ընկերներին այնտեղ աշխատելու համար:

2. Կապի համար մինչեւ օրս մենք հնարաւորութիւն չունենք յատուկ սուրհանդակի միջոցով կապուիլ Թաւրիզի հետ, այլ պատահական գնացողների հետ ենք լուրեր ուղարկում: Այս սաստիկ խանգարում է մեր աշխատանքներին եւ դանդաղեցնում նրանց:

3. Թագնած ընկերներին եւ նրանց ընտանիքներին նպաստ տալու խնդիրը: Սրանց թիւը շատ մեծ է, անգամ պատասխանատուները, իսկ կեանքի պայմանները այնքան ծանր, որ առանց մեր օգնութեան դժուար է նրանց ապրել:

4. Է-ի գործի⁵⁵ համար խնդրում ենք յատուկ ֆոնտից գումար դնեք պ. Պողոս Գալձեանի մօտ, որպէսզի մենք այստեղ հնարաւորութիւն ունենանք,

52 **Սահակ Թորոսյան (1885-1940)** - ականավոր հասարակական-քաղաքական գործիչ: Ծնվել է Փարպի գյուղում: 1918 թ. եղել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության առաջին և երկրորդ խորհրդարանի անդամ (<ՅԴ խմբակցություն), Հանրային խնամատարության և աշխատանքի նախարար (փետրվարի 7 - հունիսի 24, 1919), Պարենավորման նախարար: Խորհրդային իշխանության տարիներին 3 անգամ ձերբակալվել է: 1937 թվականին արքայից վերադառնալուց հետո կրկին ձերբակալվել է: 1938 թվականին դատապարտվել է մահվան: Մահապատիժը հետաձգվել է: Մահացել է Երևանի բանտում 1940 թվականի հոկտեմբերի 8-ին:

53 **Դրո (Դրաստամատ Կանայան, 1883-1956)** - հայ ականավոր ռազմական և պետական գործիչ: Երիտասարդ տարիքից անդամակցել է ՀՅԴ-ին: 1905 թ. կուսակցության որոշմամբ սպանել է Բաքվի նահանգապետ, իշխան Նակաշիճեհն, որը 1905 թ. Բաքվում հայ-թաթարական ընդհարումների և հայ բնակչության կոտորածների գլխավոր կազմակերպիչն էր: Առաջին աշխարհամարտի տարիներին գլխավորել է հայկական երկրորդ կամավորական գունդը: 1918 թ. մայիսին ղեկավարել է Բաշ Ապարանի հերոսամարտը և ջախջախել թուրքական զորաբանակին: Եղել է Հայաստանի Հանրապետության առանցքային ղեկավարներից մեկը: 1920 թ. աշնանը ընդգրկվել է Ս. Վրացյանի կառավարության կազմում որպես ռազմական նախարար: Դրոյի դիրքորոշումը վճռական է եղել Հայաստանի խաղաղ խորհրդայնացման և երկիրն ավելորդ արյունահեղությունից հեռու պահելու գործում: Հայաստանի խորհրդայնացումից հետո որոշ ժամանակ պարտադրաբար ապրել է Մոսկվայում, ապա անցել է արտասահման:

54 Համաներում:

55 Խոսքը Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից և իրագործողներից մեկի Էնվերի հայտնաբերման և ահաբեկելու մասին է, որի վերաբերյալ հատուկ որոշում էր ընդունվել ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի կողմից:

ըստ հարկին, գործը կազմակերպել: Դրամական ծանր վիճակը կարող է գործի յաջողութեանը խանգարել:

Ընկեր Միհրանը բանտից արդեն դուրս է եկել եւ պատրաստուում է անցնել Կ. Պոլիս: Պոլիս անցան նաեւ մեր ընկերներից Նուբար Ահարոնեանը, որի համար մենք այստեղ երաշխաւորեցինք⁶ 6,5 լիրայի Հրաչեայ Զաքարեանի առաջ: Ընկեր Նուբարը պէտք է այդտեղ գումարը հանձնէ Երւանդ Զաքարեանին, հետեւեցեք եւ մեզ յայտնեցեք: Դրամները տեղափոխելու համար ամենալաւ միջոցը Ղազարն է, արագութեամբ յանձնեցեք Գալձեանին մի գումար, որը եւ կտեղափոխուի մեզ: Ընկերներ, նորից ենք կրկնում, առանց դրամի մի ամբողջ գործը կարող է վիժել, միք դնէ մեզ «Ծապլուարի» հերոսի պայմանների մեջ:

Ընկերական ջերմ բարևներով՝ Սուրեն

15.09.1921

ԼՅԴ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 9 (6 էջ):

Բնագիր: Ձեռագիր:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 4

Սիրելիք, N 1

Գրում եմ ձեզ վերջին անցքերի մասին: Ձեր նամակը, նաև՝ Գուրգենի, ստացանք: Մենք արդեն վերջին երկու նամակով ձեզ տեղեկացրել ենք դրութեան մասին: Խնդրում ենք գրեք ստացել եք նրանք արդե՞՞ք: Նամակները գրում ենք համարով, որպէսզի հեշտ լինի ստուգելը:

1. Թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Վրաստանում դրութիւնը վերջին նամակից յետոյ նոյնը՝ անփոփոխ: Մասսաների դժգոհութիւնը ծաւալում ու տարածում է, բայց կոնկրետ արտայայտութիւն չի ընդունել: Նրա հետ միասին ղեկավար շրջաններն ալ անցնում են աւելի ակտիւ աշխատանքների եւ տեղական ոյժերով պայքարելու գաղափարին: Մասնատրապէս վրացական շրջանները, բացի մենշեփիկեան կուսակցութիւնից, միւս բոլոր հոսանքները համախմբել են այդ գաղափարի շուրջը: Մենշեփիկեան շրջաններում տիրում է լքում եւ սպասողական դրութիւն: Յոյսերը կապում են իրենց Եւրոպայի ընկերների հետ: Արխագլայի շրջանում մասնատր տեղական բնոյթ կրող շարժում կայ: Ուղարկած են զօրքերը, միւս շրջաններում հանգիստ է: Հիւսիսային Կովկասում նախկին մեծամասնական Լոգինով ասպտամբել է Մոզդոկի եւ Ստաւրոպոլի շրջաններում, մի քանի օրով գրաւել անգամ Կիպովօղսկը: Ռուսաստանում դժգոհութիւնը մեծանում է: Կենտրոնական կառավարութիւնը շարունակում է յամառ ու հետեւողական կերպով ամլանալ: Սովետները փորձել են անցնել դէպի Մոսկուայ, բայց կառավարական ամենախիստ միջոցներին հանդիպելով, դիմել են դէպի հարաւ, արեւմուտք, Սիբերիա եւ Թուրքեստան: Մենք կանգնած ենք քաղաքական մեծ դէպքերի նախօրեակին, շնորհիւ Լեհ-Ռուսական եւ Ռումին-Ռուսական ծագած կոնֆլիկտների⁵⁶:

56 Խոսքը 1919-1921 թթ. ռուս-լեհական (կամ բոլշևիկ-լեհական) պատերազմի և Բեսարաբիայի համար ռուս-ռումինական ռազմական կոնֆլիկտի մասին է:

Չզիտենք թե պատերազմական գործողությունները սկսել են թե ոչ, սակայն Ռուսաստանում յայտարարած է զօրահաւաք եւ տենդային կերպով վարում է նախապատերազմական աշխատանքներ: Տրամադրությունը ընկած է, մամուլը լաւ է եւ մեղմ: Այստեղ նոյնպէս նախապատերազմական աշխատանքներ են վարում: Զօրքը պատերազմական դրութեան մէջ է տրում, երկաթուղին իր սաստանները⁵⁷ ազատ է պահում զինուորական գործի համար: Տաճկական ֆրոնտում միանգամայն հանգիստ է, չի ենթադրում ոչ մի ընդհարում: Ղարսում գումարել է Տաճիկների եւ Հայաստանի ներկայացուցիչների համագումար⁵⁸: Հայաստանի կողմից մեկնել են Մակինցեան, Մռաւեան, մեծամասնականների [կողմից] Օրջոնիկիձե: Լուրեր կան, որ ներկայ է նաեւ Էւերը: Մենք նրա հետքը կորցրել ենք: Փնտրում են Ղարսում: Ամեն միջոց ձեռք է առնւած այդ ուղղութեամբ:

Հայաստանում վերջացաւ հասարակական գործիչների համագումարը, որի նպատակը քաղաքական էր, իսկ անուանական կրում էր երկրի օգնութեան գործը կազմակերպելու համար գումարած համագումար: Ստորագրել են կոչին՝ ուղղւած արտասահմանեան գաղութներին, համարեայ բոլոր ականաւոր գործիչները (ոմանք, աւելին՝ մեծամասնությունը Չէկայի սպառնալիքի տակ): Դաշնակցականներից [ստորագրել են] միայն Սիրական Տիգրանյանը⁵⁹ եւ Տիգրան Յովհաննեսեանը: Ընտրւած է դեկլարացիա [դելեգացիա] Յով. Թումանյանի ղեկավարութեամբ արտասահման անցնելու: **Աշխատեցէք վարկաբեկել եւ քայքայել այդ ձեռնարկը:** Քաղաքական մեծ նշանակություն կունենայ նրա անյաջողությունը: Ռոպիետեւ Հայաստանի ներկայ ղեկավարները տարածում են, Դաշնակցությունը քայքայել ու չքացել է, իսկ իրենք՝ ուժեղացել:

Ռիգայի ձեր բանակցությունները⁶⁰ անյաջողութեան են հանդիպել հետեւեալ պատճառներով: Մոսկուայի Կենտկոմիտեն⁶¹ դիմել է Հայաստանի կենտրոնականին եւ նրանից պահանջել կարծիք: Վերջինս պատասխանել է, որ կարիք չկայ բանակցել Դիաշնակցության հետ, որը միանգամայն պարտւած է ու վարկաբեկված: Մօտ օրերս մեկնում է գաղութներն այցելելու համար Կարինեանը եւ

57 Շարժակազմեր:

58 Խոսքը հավանաբար 1921 թ. սեպտեմբերի 26-ին սկսված Կարսի կոնֆերանսի մասին է, որն ավարտվեց հոկտեմբերի 13-ին Կարսի պայմանագրի ստորագրումով:

59 **Սիրական Տիգրանյան** (1875-1937) հայ պետական, քաղաքական գործիչ, ՀՀ Գ անդամ: 1918-1920 թթ. եղել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար, Խորհրդարանի փոխնախագահ: Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից կարճ ժամանակ անց տեղափոխվել է Իրան, ավելի ուշ՝ վերադարձել Հայաստան: 1924 թ. և 1933 թ. ձերբակալվել է որպես ակտիվ դաշնակցական, և երկու դեպքում էլ ազատ է արձակվել: Վերջին անգամ ձերբակալվել է 1937 թ. և գնդակահարվել:

60 Խոսքը 1921 թ. հուլիսի 8-14ին Ռիգայում ՀՀ Գ և Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունների միջև կայացած բանակցությունների մասին է: ՀՀ Գ Արտասահմանյան պատասխանատու մարմնի կողմից լիազորված էին Վահան Փափազյանը (Կոմս), Արշակ Զամայանը և Վահան Նավասարդյանը: Խորհրդային պատվիրակներն էին Սահակ Տեր-Պարբիեյանը, Վահան Տեր-Վահանյանը և Ա. Իոնֆեն: Բանակցությունների հիմնական նպատակը միմյանց միջև գոյություն ունեցող հակասությունների հարթեցումն էր: ՀՀ Դաշնակցության հետապնդած նպատակն այն էր, որ Խորհրդային իշխանությունները հնարավորինս ընդարձակեն Խորհրդային Հայաստանի տարածքները: Խորհրդային կողմն ակնկալում էր ՀՀ Դաշնակցության բարյացակամ վերաբերմունքն իր հանդեպ: Բանակցությունները ծրագրվել էին անցկացնել դեռ այն ժամանակ, երբ Սյունիքը հերոսաբար դիմադրում էր Խորհրդային գործերին: Բանակցությունների օրերին վերջին մարտերն էին տեղի ունենում Գ. Նժդեհի ղեկավարությամբ: Սյունիքը Խորհրդային Հայաստանին ենթարկելուց հետո Խորհրդային իշխանությունների հետաքրքրությունը բանակցությունների հանդեպ կտրուկ թուլացավ:

61 Նկատի ունի Ռուսաստանի Կ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն:

Յով. Թումանյանի որդի Համիկը⁶²: Ոչ մի վստահություն ցոյց չտաք նրան, անգամ եթե մեզանից թուղթ ներկայացնի: Մենք Համիկին կասկածում ենք:

Թարիզից հատ հատ ընկերներն անցնում են Հայաստան եւ այստեղ: Պարսկաստանում կուսակցական աշխատանքները հաջող են ընթանում: Սակայն Փրկութեան կոմիտեն⁶³ իրենց վերջնական լիկլիդացիան է անում: Բանտարկւածները նստած են թէ այստեղ եւ թէ Հայաստանում: Բաց են թողել միայն Լօռեցեանի կնօջը եւ Թիֆլիսում 14 երիտասարդներին:

Ուղարկում ենք ձեզ մեր նախահաշիւը հապճեպ կազմած, մանրամասնությունները կը պատմէ ընկեր Մենակը:

1. Կազմակերպություններին (Հայաստան, Վրաստան) – 200 լիրայ⁶⁴:

2. Նպաստներ մահացած ընկերների ընտանիքներին (Ռոստոմի, Խաթակի, Կարձիկեանի, Կաֆաֆեանի, Յովհաննէսեանի, Աղամալեանի, Մանասեանի), բացակա ընկերների, որոնք Պոլիս են կամ Պարսկաստան – 100 լիրայ:

3. Նպաստներ թագնւած եւ վտանգւած ընկերներին (այդպիսիների թիւը հասնում է մօտ 68-ի), անունները չենք ուզում տալ – 300 լիրայ:

4. Անգործ ընկերների, որոնց կառավարութիւնը հետապնդում է, ընկերների, որոնք գալիս են առանց դրամի Պարսկաստանից, որոնք հիւանդ են եւ գործի անընդունակ – 100 լիրայ:

5. Գործող կուսակցական աշխատանքներով զբաղւող քսան եւ հինգ ընկերների – 200 լիրայ:

6. Բանտարկւած ընկերների, որոնց թիւը 23 է – 150 լիրայ:

7. Շրջանների հետ կապ պահելու համար – 50 լիրայ:

Ընդհ. 1100 լիրայ:

Ընկերներ, չնայած, որ այս գումարը առաջին ակնարկից շատ մեծ է, բայց ի նկատի ունեցէք, որ կարիքը շատ մեծ է, մենք չենք կարող բոլորին բաւարարել, դրանից առաջանում է լքում, դժգոհությունները եւ կուսակցական աշխատանքներն էլ գերազանցօրէն դանդաղում են: Կուսակցական կեանքը եռ ու զեռի մէջ է: Աշխատանքները անդադար շարունակւում են: Աշխատեցէք կապ պահել մեզ հետ եւ իրազէկ դարձրէք մեզ այդտեղի քաղաքական կեանքին եւ կուսակցական աշխատանքներին: Նամակները գրեցէք զգոյշ եւ վստահելի ձեռներով ուղարկեցէք

Ի դիմաց ԿԿ-ի
Ջերմ բարեւներով՝ Սուրեն

30.09.1921

ՀՅԴ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 11 (4 էջ):

Ձեռագիր: Բնագիր:

62 Համիկ Թումանյան (1896-1938) - բանաստեղծ Հովհաննէս Թումանյանի չորս որդիներից երրորդը: Առաջին Հանրապետության տարիներին եղել է պետական պաշտոնյա, ՀՅԴ կուսակցության անդամ: Հայաստանի խորհրդայնացումից հետո փորձել է հարմարվել փոփոխություններին և բոլշևիկների հետ աշխատելու տրամադրություն է ցուցաբերել: Ապրել է Թիֆլիսում: Հիմնականում զբաղվել էր գրական և գիտական գործունեությամբ: 1937 թ. ձերբակալվել է խորհրդային իշխանությունների կողմից և 1938 թ. գաղտնի գնդակահարվել:

63 Խոսքը Հայրենիքի փրկության կոմիտեի մասին է:

64 Կ. Պոլսից պիտի լիրա ուղարկեին՝ թուրքական լիրա, որը Կրաստանում բավական արժեք ուներ:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 5

Սիրելի՛ք, N 3

Ձեր վերջին երկար նամակը եւ դրամը ստացանք: Սակայն մինչեւ այդ գումարը ստանալը մենք ապրում էինք տագնապալից վիճակ եւ ստիպւած եղանք փոխարինաբար վերցնել 300 լիրայ մեր սովորական աղբիւրից, ուստի խնդրում ենք այդ գումարը վճարել ըստ հարկին, ինչպէս մենք ձեզ գրել էինք թիւ 2 նամակով: Այս վերջին դէպքերը մեզանից հսկայական ծախքեր են պահանջում, ուստի խնդրում ենք նոյեմբեր ամսւայ գումարը նոյնպէս առանց դանդաղման տեղափոխել մեզ: Յայտնում ենք ձեզ վերջին տեղեկութիւնները:

Հայաստան ընդհանուր առմամբ հանգիստ է: Տնտեսական սարսափելի, չտեսնւած չափերի կրիզ⁶⁵ է: Այս պարագան բոլոր ինտելիգենցիայի շարքերում դժգոհութեան եւ երկիրը թողնելու տրամադրութիւն է ստեղծել: Ով հնարաւորութիւն ունի, այս կամ այն պատրւակով թողնում ու հեռանում է: Նոյնը կարելի է ասել եւ միւս խաւերի մասին: Չնայած գործադրւած հսկայական ջանքերին, Հայկական զօրք կազմակերպել նրանց չի յաջողւել: Հայ բանակի թիւը 150-200 զինուորից աւել չի անցնում: Գիւղը սոված ու դժգոհութեան վիճակ է ապրում: Հակաբոլշեւիկեան տրամադրութիւնը հասել է չտեսնւած չափերի: Տեղի են ունենում շատ վայրերում, ինչպէս որ Ն. Բայազետում ինքնաբերաբար տերրորների⁶⁶ դէպքեր: Դիլիջանի եւ Ղազախի լեռներում ապստամբած խմբերը վերջին ամիսների ընթացքում ահաբեկման մէջ էին պահում ամբողջ շրջանի իշխանութեանը: Ազգաբնակչութիւնը նրանց⁶⁷ ակտիւ աջակցութիւն ու համակրանք էր ցոյց տալիս: Սակայն ցրտերի պատճառով նրանք դադարեցրին իրենց գործունէութիւնը: **Ղեկավարները այժմն այստէղ են և մեր տրամադրութեան տակ:** Մեծամասնականների պրեստիժը⁶⁸ շատ ցածր է, որովհետեւ նրանք ի վիճակի չեղան լուծելու մի շարք առաջադրւած խնդիրներ: Ներքին քաղաքականութեան մէջ՝ սովի եւ պարենաւորման խնդիրը, արտաքին քաղաքականութեան մէջ՝ սահմանների հարցը: Ղարսի կոնֆերանսը նրանց հեղինակութեան վերջին նշոյլներն էլ վարկաբեկեց⁶⁹: Համաձայն որոշումների 3-րդ կետի, երկու կողմերն՝ Տաճկաստանն ու Խորհրդային իշխանութիւնը պարտաւորում են հարկ եղած դէպքում, եթէ այդ երկրներից մէկին ներքին ոյժերից վտանգ սպառնայ, մտցնել իրենց զորքերը եւ խաղաղեցնել երկիրը: Այս կետից յետոյ բոլոր թաթար մասսան ոգեւորութեամբ խօսում է այն օրւան մասին, երբ տաճկական զօրքերը ներս կը խուժեն Անդրկովկաս Հայկական ապստամբութիւնը ճնշելու նպատակաւ: Հայաստանի Յեղկոմը արդարացնում է Ղարսի

65 Ճգնաժամ:

66 Ահաբեկչութիւն:

67 Ապստամբներին:

68 Հեղինակութիւնը:

69 Նկատի ունի Կարսի պայմանագրի Հայաստանի համար ծանր պայմանները:

Վրաստան: Վերջին շրջանում նկատում է եռանդուն գործունեություն վրաց մենշելիկների կողմից: Երկու շաբաթ սրանից առաջ յայտարարել էր երկաթուղային գործադուլ, որը տևեց 24 ժամ: Բանուորությունը ուղարկեց Ռեկոմի մի դելեգացիա⁷⁸ հետևեալ պահանջներով՝ արձակել բանտարկեալներին, երկրորդ՝ մամուլի եւ խոսքի ազատություն տալ, երրորդ՝ հեռացնել ռուսական զորքը: Այս դելեգացիան նոյնպէս բանտարկեց: Եւ ի նշան բողոքի կազմակերպեց այս գործադուլը: Ամսիս 4-ին Թիֆլիզում տեղի ունեցան խուզարկություններ եւ բանտարկություններ մենշելիկների, դաշնակցականների, վրաց սպաների, հայ կադետների⁷⁹: Բանտարկություններ կայացւեցին եւ գաւառներում: Բանտարկեալներին մտադրություն կայ արքորել Ռուսաստան: Մենշելիկները բողոքում են՝ յայտնելով, որ նրանք անկախ Վրաստանի քաղաքացիներ են, եւ իբրեւ այդպիսին չեն կարող արքորվել Վրաստանից դուրս: Այստեղ էլ ազգաբնակչությունը խիստ դժգոհ է մեծամասնական քաղաքականությունից, երկրում փաստօրէն իշխանություն չկայ: Տրանսպորտը ծայր քայքայման վիճակում է: Առաջ են եկել հին կարավաններն ու չառադարները⁸⁰, որոնց միջոցով եւ կատարում է ապրանքների փոխանակությունը: Եւ ինչպէս հին ժամանակները, աւազակային խմբերը անդադար թալանում եւ իշխում են ճանապարհներին: Շովինիստական տրամադրությունները շատ մեծ ծաւալների է հասել: Հայկական գաւառներում մենշելիկների կատարած վայրագությունները նսեմանում են ներկայ պայմանների առջեւ: Հարկային սիստեմը փաստօրէն ուղղած է հայ բուրժուազիայի եւ հայ տարրի դէմ: Օր.՝ Ախալքալաքը վճարեց 660 միլ., մինչդեռ Քութայիսի ամբողջ նահանգը՝ 300 միլ.⁸¹: Հայ շինականը առանց պրոպուսկի⁸² իրաւունք չունի իր մթերքները բերել քաղաքները վաճառելու: Եւ այսպիսով տնքում է վաշխառուների ձեռքում: Միւս կողմից նկատում են վրաց-թաթարական մերձեցման տենդենցներ⁸³ Ախալքալայի շրջանում եւ ընդհանուր քաղաքականութեան մէջ: Ինչպէս մենշելիկների օրերին, այնպէս էլ այժմ վրաց-թաթարական լռելեայն կռաւիցիայ գոյություն ունի ընդդէմ հայկական հանրապետութեան ու հայ աշխատաւորութեան շահերի:

Ադրբեջանը վարում է իր նախկին քաղաքականությունը: Ռուսական տարրը գերիշխողն է հանդիսանում: Թաթար ինտելիգենցիան փաստօրէն վերացւած է ասպարէզից: Սրանից մի ամիս առաջ Բագում ձերբակալեց 63 մարդ, որոնք քեմալիստական եւ պանիսլամիստական դաւադրություն էին կազմակերպել: Բոլորը գնդակահարեցին: Նկատում է տենդենց Բագի նավթահանքերի մեքենաները հանելու եւ տեղափոխելու Գրոզնի: Թաթարական մասսա-

78 Պատվիրակություն:

79 Հայ կադետներ էին անվանում 1917 թ. Թիֆլիսում ստեղծված Հայ ժողովրդական կուսակցությանը, որը գաղափարական-ծրագրային նոյնություն ուներ 1905 թ. հոկտեմբերին հիմնված ռուսական ազատական «ժողովրդական ազատության» կամ Կոնստիտուցիոն դեմոկրատների (կադետների) կուսակցության հետ: Հայ ժողովրդական կուսակցությունը Հայաստանի Հանրապետության տարիներին Հ. Քաջագունու երկրորդ կառավարության կազմում կռաւիցիայ էր կազմել Հ3 Ղաշնակցության հետ (1918 թ. նոյեմբեր – 1919 թ. մայիս):

80 Կարավաններ ու չառադարներ ասելով այստեղ նկատի ունի ծիերի հին կառքերով ապրանքափոխանակություն կատարելը, որպիսին շատ էր տեղի ունենում նախընթաց ցարական ժամանակներում:

81 Նկատի ունի միլիոն ռուբլի:

82 Թույլտվություն: Նկատի ունի գրավոր թույլտվությունը:

83 Միտումներ:

ները⁸⁴ զգւելով մեծամասնականներից, իրենց երեսը կրկին ուղղել են դէպի Տաճկաստանը: Ինչ-որ սպասելիքներ ունեն: Ադրբէջանի վալիւտան 60 % ցածր է վրացականից:

Անդրկովկասեան: Տասը օր սրանից առաջ նշանակած էր Բագում Բաղբիւրօյի պլէնումը, որ որոշուեց Անդրկովկասեան ֆեդերացիայի հարցը: Արտաքին գործերը, հաղորդակցութիւնը, ֆինանսները, պարենաւորումը, զօրքը, բանտրագիւղացիական կոնտրոլը պէտք է լինի ընդհանուր: Բաղաքական կենտրոնը Բագումն է, իսկ՝ տնտեսականը՝ Թիֆլիսը: Վրաց եւ միւսուլման մեծամասնականները ֆեդերացիայի հակառակ են եղել, բայց ենթարկւել են բարձր որոշմանը: Միասնիկեանը մամուլի էջերում աշխատում է պարզաբանել եւ արդարացնել ֆեդերացիայի գաղափարը⁸⁵:

Այսպիսով ազատ ու անկախ Հայաստանը դադարեցնում է իր գոյութիւնը: Գաղութների վրայ երեւի այս ծանր տպաւորութիւն կգործի եւ մեծամասնականներին վարկաբէկ կանի: Եւ բոլոր նրանք, ովքեր (ինչպէս Յ. Թումանեանը, «Ռազմիկ»ի⁸⁶ նախկին խմբագիր Տէր-Ռուբինեանը, Մ. Գէօրգեանը եւ ուրիշներ) մեծամասնական իշխանութիւնը համարում էին հին կազմի կառավարութեան, բայց ոչ պետական հիմքերի փոփոխութիւն, այժմ՝ այս աքսից յետոյ կոնֆուզի⁸⁷ մէջ են: Աշխատեցէք այս ուղղութեամբ պարզել խնդիրները գաղութներում: Հնչակեանները կարող են պաշտպանել այս տեսակէտը, որովհետեւ նրանց ուղարկած ներկայացուցիչը լքած հեռացաւ այստեղից: Թամադան⁸⁸ նրան շատ նիւթեր տուեց այս ուղղութեամբ:

Երկու օր առաջ տեղափոխուեց այստեղ Պօլսոյ շտաբը: Խօսում են տաճիկների հետ ընդհարւելու հնարաւորութեան մասին, որն առաջանալու է Ֆրանս-Անգորայի համաձայնութեան շնորհիւ⁸⁹: Թերթերը շատ ագրեսիւ են նաեւ Լեհաստանի վերաբերմամբ: Մենք զուրկ ենք ոչ տենդենցիոզ ինֆորմացիայից: Այս լուրերի հետ միասին խօսում են Դրօյի վերադարձի մասին, իբրեւ միակ կազմակերպողը հայկական ոյժի: Սակայն ինքը Դրօն ոչինչ չի գրում այս մասին:

Պարսկաստան: Մեծամասնականներն ակտիւ աշխատում են Հիւսիսային Պարսկաստանում՝ դրամի ու պրոպագանդի միջոցով: Ըստ նրանց ցանկութեան մարտին կամ ապրիլին նրանք ուզում են ներս խուժել Պարսկաստան: Դրամի միջոցով մեծ յաջողութիւն ունեն նրանք հայ տարրի մէջ անգամ Թէհրանում: Դաշնակցական մի թեւ էլ Յ. Միրզոյեանի ղեկավարութեամբ թէքւել է դէպի մեծամասնական օրիէնտացիան: Ընդհակառակը Թաւրիզում դաշնակցականները հակամեծամասնական պլատֆօրմայի վրայ են կանգնած: Մի

84 Չանգվածները:
85 Մանրամասների համար տե՛ս թիվ 7 ծանոթագրութիւնը:
86 «Ռազմիկ»-ը 1920 թ. ՀՀ Ռազմական նախարարութեան պաշտոնաթերթն էր:
87 Լատ. անհարմար դրություն:
88 Կեղծանուն է:
89 Խոսքը 1921 հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված թուրք-ֆրանսիական համաձայնագրի մասին է:

խումբ Առաքել Յարութինեանի (Վարդանի ընկերոջ եւ Մելիք-Թանգեանի⁹⁰ աջակից) ղեկավարութեամբ փորձեց աշխատել այդ ուղղութեամբ: Բայց կուսակցութիւնը նրան հեռացրեց իր շարքերից եւ այդպիսով շարժումը դադարեց:

Հեռացած են կուսակցութիւնից նաեւ Նժդէի⁹¹, Վարշաւեանը⁹² եւ Հայր Աբրահամը⁹³: Վրացեանը⁹⁴ արդէն մեկնել է Թէիքան: Թաւրիզում մնում է միայն Ռուբէնը⁹⁵: Մեծամասնականները որոշել են դիմել պարսից կառավարութեանը եւ պահանջել, որ Ռուբէնին եւ Վրացեանին այնտեղից արտորեն: Ուրմիայի եւ Խոյի շրջաններում Մակոն⁹⁶ գործում է՝ տաճկական օրիէնացիայ ունենալով հակապարսկական ուղղութեամբ: Ռուբէնը եւ Մելիք-Թանգեանը առաջարկել են պարսից կառավարութեանը կազմակերպել մի խումբ Սակոյի դէմ կուելու համար: Մեծամասնականների ջանքերով այդ մերժել է:

Թաւրիզից դաշնակցականները էականացիայի են ենթարկում՝ մի մասը հեռանում է (վտանգւածները) կամ Թէիքան կամ դասաւորում ծառայութեան մէջ: Երկրորդը վերադառնում է Հայաստան: Մեծամասնականները, Բէկզադեանի⁹⁷ Թաւրիզ գնալուց յետոյ, եկել են այն եզրակացութեան, որ դաշնակ-

90 **Ներսես արք. Մելիք-Թանգեան (1866-1948)** - 1880-1890-ական թվականներին դասավանդել է Սյունիքի, Արցախի, Բաքվի հայկական դպրոցներում: Երբ 1896 թ. ցարական իշխանության հրամանով փակվում են հայոց դպրոցները, Մելիք-Թանգեանը գնում է Ս. Պետերբուրգ ուսումը շարունակելու, և ավարտում Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Սանկտ Պետերբուրգից վերադառնալուց հետո ձեռնարկվել է Եպիսկոպոս և 1912-1948 թթ. եղել է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը:

91 **Պարեգին Նժդէ (Տեր-Հարությունյան 1886-1955)** - հայ ռազմաքաղաքական գործիչ, փիլիսոփա: Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո 1918 թ. կառավարության կողմից նշանակվում է Նախիջևանի գավառապետ, իսկ 1919 թ. օգոստոսից՝ Կապանի, Արևիքի և Գողթանի (Կապարգողթ) ընդհանուր հրամանատար: Շուրջ երկու տարի նրա ղեկավարությամբ Սյունիքը հերոսական պայքար է մղել թուրք-բոլշևիկյան զերակաշիռ ուժերի դեմ:

92 **Պևրոզ Վարշաւեան** Հայաստանի Հանրապետության երկրորդ խորհրդարանի պատգամավոր, ՀՀՊ անդամ:

93 **Հայ Աբրահամ (Ավետիք Սահակյան, 1864-1933)** - հայ ականավոր հասարակական-քաղաքական, պետական գործիչ է: 1893 թ. ավարտել է Մոսկվայի Պետրոլսկի գյուղատնտեսական ակադեմիան: 1918 թ. օգոստոսի 1-ից եղել է Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանի Հայաստանի խորհրդի նախագահ, 1919 թ. օգոստոս-հոկտեմբերին հանրային խնամատարության և աշխատանքի նախարար, ապա խորհրդարանի փոխնախագահ: Հայաստանի Հանրապետության անկումից հետո անցել է Պարսկաստան, ապա Իրաք եւ վերջապես Լիբանան, մահացել է Բեյրութում:

94 **Սիմոն Վրացյան (1882-1869)** - հայ ականավոր հասարակական-քաղաքական, պետական գործիչ, ՀՀՊ անդամ: Ծնվել է Նոր Նախիջևանի Մեծ Սալա գյուղում: 1911-1913 թթ. եղել է Բուստոնի «Հայրենիք» օրաթերթի խմբագիր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վերադարձել է Թիֆլիս, որտեղ մասնակցել է հայկական կամավորական ջոկատների կազմավորման գործին: 1919 թ. ընտրվել է ՀՀ խորհրդարանի անդամ: 1920 թ. մայիսին նշանակվել է Հ. Օհանջանյանի գլխավորած կառավարության գյուղատնտեսության և աշխատանքի նախարար, 1920 թ. նոյեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 2-ը՝ ՀՀ վարչապետ: 1921 թ. Փետրվարյան ապստամբության օրերին եղել է Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը: Ապստամբությունից հետո անցել է արտասահման: 1945 թ., որպես Հայկական ազգային կոմիտեի նախագահ հուշագիր է ներկայացրել Սան Ֆրանցիսկոյում ՄԱԿ-ի հիմնադիր համաժողովի կազմակերպիչ պետություններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով հայ ժողովրդի հանդեպ իրականացված պատանակա մահադատության վրա: 1951 թ. մինչև կյանքի վերջը եղել է Բեյրութի «Նշան Փալանձյան» ձեռնարանի տնօրենը:

95 **Սիմոն Տեր-Սիմոնյան (1882-1951)** - ծնվել է Ախալքալաքում: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ձեռնարանում, Մոսկվայի Լազարյան ձեռնարանում: 1902-ից անդամակցել է ՀՀ Ղազնակցությանը: 1905-1908 թթ. գործել է Վասպուրականում և Տարոնում: Երիտթուրքերի հեղաշրջումից հետո դուրս է եկել Արևմտյան Հայաստանից և մեկնել Շվեյցարիա ուսումը շարունակելու: 1913 թ. կրկին վերադարձել է Տարոն: Մեծ եղեռնի տարիներին ղեկավարել է Սասունի ինքնապաշտպանությունը: 1917 թ. ընտրվել է Հայոց ազգային խորհրդի անդամ: Եղել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր: 1920-ից ՀՀ ռազմական նախարար: Մեծ դերակատարում է ունեցել Հայաստանում թուրք-թաթարական հակապետական ընդվզումները ճնշելու գործում: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է արտասահման: Մահացել է Փարիզում:

96 **Իսմայիլ աղա Անկոն** - Ատրպատականի հյուսիսարևմտյան շրջաններում գործող քուրդ առաջնորդ էր, որ 1910-1920-ական թվականներին հայտնի էր իր թուրքամետ դիրքորոշմամբ: Կազմակերպել է այս և հարևան շրջանների ասորիների կոտորածները:

97 **Ալեքսանդր Բեկզալյան (1879-1938)** - հայ հասարակական-քաղաքական, պետական գործիչ է: Ծնվել է Շուշում, ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը, Ցյուրիխի համալսարանը: 1920 թ. դեկտեմբերից նշանակվել է խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ, 1926-1930 թթ. եղել է Անդրդաշնության ժողկոմխորհի նախագահի տե-

ցականները Պարսկաստանից Հայաստանին վտանգ չեն սպառնում: Մեծամասնականները ուղարկել են Թարիզ մի թուրք եւ մի հայ՝ Բիձ-Լեւոնին (որը բանտարկւած էր այստեղ իբրեւ դաշնակցական, բայց յետոյ տեղափոխուեց Երեւան) Ռուբէնին եւ Վրացեանին ահաբեկելու: Սակայն դաշնակցականները այդ իմանալով օրը ցերեկով Թարիզի փողոցներից մէկում ահաբեկում են խանչալով Բիձ-Լեւոնին: Իսկ թուրքը փախչում է Ջուլֆա: Հետախուզութիւնները ոչ մի հետեւեանք չեն տալիս: Պարսից կառավարութիւնը արգելում է հայերին (էմիգրանտներին⁹⁸) ժամը 9-ից յետոյ դուրս գալ փողոց:

Կուսակցական: Չնայած աննպաստ պայմաններին, կուսակցական աշխատանքները շարունակւում են հին թափով ու եռանդով: Մինչեւ օրս, շնորհիւ աննպաստ ու ձախող պայմանների, կոնֆերանսը չկարողացանք գումարել: Երեւի մօտիկ ապագայում հաւաքւի: Հայաստանում ձերբակալութիւններ շատ կայ: Երեւանում ամսոյս 7-ին եղել է օբլուա⁹⁹, ձերբակալւել են 23 մարդ: Ալեքսանդրապոլում եղել են նոյնպէս մի շարք ձերբակալութիւններ կապուած թնդանոթային բանալիների եւ երկու գնդացիների գողութեան հետ: Ընդհակառակը Վրաստանում դաշնակցականներին պրովակացիայի¹⁰⁰ են ենթարկել հայ մեծամասնականների եւ վրաց շովինիստների կողմից: Նրանց (դաշնակցականներին – Խ.Ս.) կապել են մենշեիկների աշխատանքների եւ ապստամբութիւն կազմակերպելու հետ եւ ամսի 4-ին մի շարք ձերբակալութիւններ կատարել: Թիֆլիսում բռնուած են Աշոտ Իսրայէլեան, Արամ, Անահիտ Ղազարեան, Ջաւախեան, Մինասարեան, Ն. Սարգիսեան, Արշ. Ստեփանեան, Արմ, Քիրքչեան, Ումիկեան, Վարդիկեան, Գալստեան, Մ. Ջարգարեան, Սիր. Փիրումեան, Ղուչչեան, Աղասի Թովչեան եւ ուրիշներ: Թամադան, Թոթոշը եւ Ջաջուրը¹⁰¹ յաջող կերպով փախել են եւ կոնսպիրատիւ¹⁰² կերպով վարում են աշխատանքները: Ձերբակալւել են նաեւ Յովան. Մալխասեանը եւ Լ. Ղուլեանը: Ա. Մինասարեանին մեղադրում են նաեւ պարենաւորման գեղծումների մէջ: Բարթոմուս ձերբակալւել են Ա. Պետրոսեան, Դ. Ալիխանեան եւ մի քանի ուրիշները (բոլորն արդեն ազատուած են): Ախալքալաքում նոյնպէս եղել են ձերբակալութիւններ, անունները յայտնի չեն: Ախալքալաքում Հաջի Լեւոն, Աշիկ, Բաղդիկ, Շուրնիկ Ստեփան եւ ուրիշներ. ընդհանուր թիւը 11 ընկերներ:

Չնայած այս ցնցումներին, կազմակերպութիւնը իրեն զգում է ուժեղ եւ հաստատուն: Աշխատանքները նոյն թափով շարունակւում են: Ազգաբնակչութեան սինպատիան¹⁰³ դէպի կուսակցութիւնն է: Այս պայմաններում հարկաւոր է դրամ եւ դրամ, ուստի աշխատեցէք ժամանակին փոխադրել մեզ նոյեմբերի գումարը: Հակառակ դէպքում մենք ոչ կապ պահպանելու, ոչ կօնսպիրատիւ

դակալ և առևտրի ժողովում: 1930-1934 թթ. ԽՍՀՄ դեպքանն էր Նորվեգիայում, իսկ 1934-1937 թթ. Հունգարիայում: Ջոն Է գնացել ստալինյան բռնաճնշումներին:

98 Տարագիրներ:

99 Շուրջկալ:

100 Սադրանքի:

101 Կեղծանուններ են:

102 Ընդհատակյա:

103 Համակրանքը:

աշխատելու հնարաւորութիւն չենք ունենայ: Բազմաթիւ ընկերներ մինչեւ օրս ապրում էին անլեգալ, այժմ նրանց թիւը եռապատկեց, ուստի հարկաւոր է դրամ նրանց պահելու եւ բանտարկեալներին էլ բանտ չոր հաց հասցնելու:

Սիրելի՛ք, պատկերացրէք պարզ կերպով ստեղծած վիճակը եւ ըստ այդմ աջակցեցէք մեզ: Զգուշացէք նաեւ սխալ ու հապճեպ դարձածքներից, որոնք կարող են պատահաբար լոյս տեսնել մամուլի էջերում: «Ճակատամարտ»-ում¹⁰⁴ պատահաբար լոյս տեսած մի նկատողութիւն, թէ Հայաստանում ու Վրաստանում հակամեծամասնական հոսանքները որոշել են ակտիւ քայլեր անելու, այստեղի համար ճակատագրական նշանակութիւն ունեցաւ: Համարեցին սա հիմք մենշեիկների հետ կապելու եւ պրովակացիայի ենթարկեցին մեզ: Այժմ միջոցներ ենք ձեռք առնում պարզելու մեր դիրքը և բանտարկեալներին ազատելու:

Ահաբեկումներ: Վերջին ժամանակները Ադրբէջանի եւ Հայաստանի մեծամասնական կառավարութիւնները որոշել են ակտիւ պայքարել դաշնակցականների դէմ: Բռնած է մի դոկումենտ¹⁰⁵ ստորագրած Ալիսի¹⁰⁶ կողմից, որով որոշում է ահաբեկել Ռուբէնին, Վրացեանին եւ մի քանի ուրիշների: Ուղարկած է մի նոր խումբ Թաւրիզ: Մենք արդէն յայտնել ենք ում որ հարկն է: Ադրբէջանի Չեկան էլ (նոյնպէս բռնել ենք մի դոկումենտ) մի թուրքի ղեկավարութեամբ ահաբեկման որոշում էր հանել Ռուբենի, Վրացեանի եւ մի խումբ զանգեզուրցի գործիչներից: Գործը յանձնւած է թուրք սպա Սուլթանովին, որը, ըստ մեր տեղեկութիւնների, այժմ գտնուում է Երեւանում եւ այնտեղից է կազմակերպում: Բացի դրանից, որոշւած է մի խումբ ահաբեկիչներ էլ ուղարկել Պօլիս, մի ինչ-որ Ղարաբաղցի Լեւոնի (նախկին սպայ) ղեկավարութեամբ: Նա դիմել է մեր ահաբեկիչներին այդ առաջարկով, որտեղից էլ մենք տեղեկացել ենք: Ահաբեկելու են Աբրահամին¹⁰⁷, Սարգիսին¹⁰⁸, Խատիսեանին¹⁰⁹ եւ մի քանի

104 «Ճակատամարտ» 1921-1924 թթ. 4. Պոլսում իրատարակվող դաշնակցական թերթ էր: Հաջորդել է «Ազատամարտ»-ին (1909-1915), «Արդարամարտ»-ին (1918), «Արիամարտ»-ին (1918-1919):

105 Փաստաթուղթ:

106 **Ալիս (Ալեոսիս Նուրիջանյան, 1896-1938)** - բոլշևիկյան կուսակցական ու պետական գործիչ: Ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը, Կիևի Առևտրի ինստիտուտը: 1918-ից եղել է բոլշևիկների շարքերում: 1920 թ. ամռանը ընտրվել է Հայաստանի Կոմունիստական (բանվորական) կուսակցության արտասահմանյան բյուրոյի անդամ: 1920 թ. նոյեմբերից մինչև 1921 թ. մայիս եղել է Հայաստանի հեղափոխական կոմիտեի անդամ, զինվորական գործերի ժողովրդական կոմիտար: Հայտնի է դաժան ռեպրեսիվ գործողություններով, մասնավորապես դաշնակցականների և «դաշնակցական» պիտակավորված մարդկանց դեմ պայքարով: Ալիսիի գործողությունների դաժանությունը 1921 թվականի Փետրվարյան ապստամբության պատճառներից մեկն էր: 1921 թ. սեպտեմբերից մինչև 1923 թ. փետրվար եղել է Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիտար: 1923-1930 թթ. կուսակցական աշխատանք է կատարել Ռուսաստանում: Գնդակահարվել է 1938 թ.:

107 **Աբրահամ Գյուլստանյան (1875-1946)** - հայ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀԴ անդամ: Ավարտել է Էջմիածնի Վերականգնման, Յարուսլավի Դեմիդովյան բարձրագույն վարժարանի իրավաբանական բաժինը: 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ղեկավարել է Գանձակի հայության ինքնապաշտպանությունը: 1910-1912 թթ. ծերբակալվել և բանտարկվել է ցարական իշխանությունների կողմից: 1916-1918 թթ. եղել է Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ: 1918 թ. Ռուստոնի հետ մասնակցել է Բաքվի հայության դիմադրության կազմակերպմանը: 1919 թ. հունիսին ընտրվել է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, եղել ներքին գործերի և արդարադատության, 1920 թ. Ելանտական նախարար: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է արտասահման: Փարիզում երկար տարիներ զբաղվել է ՀՀԴ պատմության կենտրոնական արխիվի փաստաթղթերի կարգավորմամբ: 1942 թվականին եղել է Բեռլինում հիմնադրված Հայ ազգային խորհրդի փոխնախագահը: Երկրորդ աշխարհամարտի ավարտին, Փարիզը գերմանացիներից ազատագրելուց հետո, ֆրանսիացի կոմունիստների պահանջով որդու հետ ծերբակալվել է, բանտարկվել (1944 թ. հոկտեմբեր – 1945 թ. սեպտեմբեր):

108 **Սարգիս Արարատյան (1886-1943)** - հայ պետական, քաղաքական գործիչ, ՀՀԴ անդամ: Ծնվել է Արևելյան Անդրկովկասի Նուխի քաղաքում: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ժնկի համալսարանում: 1905-1906

ուրիշ ընկերների: Կասկածում ենք, որ այդ գործին մասնակցում է Բարսեղը, ուրիշ լավ ճանաչում է Խոխան¹¹⁰: Այս առթիւ ոչ մի աղմուկ ու ակտ չըկատարեք, մինչեւ լրիւ չըպարզենք հարցը:

Ադրբեջանի թաթար երիտասարդությունը սաստիկ վրդոված լինելով Զիւանշիրի¹¹¹ սպանութեամբ, որոշել է իբրեւ ռեւանշ ահաբեկել Խատիսեանին եւ ուղարկել է թուրք: Նախագգուշացրեք նրան: Նորից կրկնում ենք այս բոլորը կատարեցէք առանց աղմուկի եւ աւելորդ յայտարարութիւնների: Մենք այստեղ այդ ուղղութեամբ աշխատանքները շարունակում ենք, ուստի ձեր գաղտնապահութիւնից է կախված նրանց յաջող լուծումը:

Ընդհանուր տեղեկութիւններ: Շուլաւերում թոքախտից վախճանեց Սրինգը¹¹²:

Մեծամասնականները կուսակցական շարքերի մաքրում են յայտարարել, որի շնորհիւ կուսակցութիւնից հեռացել են Քաթարաձէ, Գեգեչկորի, Արամալիս Երզնկեան¹¹³, Իւանեան: Կասկածի տակ է նաեւ Մակինցեանը¹¹⁴:

թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ կազմակերպել է Նուխիի հայերի ինքնապաշտպանությունը: Առաջին աշխարհամարտի ընթացքում մասնակցել է կամավորական շարժման ղեկավարմանը: 1917 թ. ռուսական հեղափոխության ընթացքում և դրանից հետո ակտիվ գործունեություն է ծավալել Բաքվում: 1918 թ. Ռոստոմի և Ա. Գյուլխանդանյանի հետ ղեկավարել է Բաքվի հայերի ինքնապաշտպանությունը: Բաքվի ձակատագրական օրերին իբրև Բաքվի Ազգային խորհրդի անդամ վարել է անգլիական բանակը Բաքու հրավիրելու գործը և Պարսկաստան գնալով կարողացել է գործը Բաքու բերել 1918 թվականի օգոստոսի 3-ին, որի շնորհիվ Բաքուն կարողացավ իր ինքնապաշտպանությունը շարունակել մինչև սեպտեմբերի 15-ը: Եղել է Բաքվի Ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչը Թեհրանում պարսիկ կառավարության և դաշնակից կառավարությունների դեսպանատներում: 1919 թվականի օգոստոսին ընտրվել է Հայաստանի խորհրդարանի փոխնախագահ: 1919 թ. ընտրվել է ՀՀՂ Բյուրոյի անդամ: 1920 թ. բյուրո-կառավարության կազմում եղել է հանրային խնամատարության և վերաշինության նախարար:

109 **Ալեքսանդր Խատիսյան (1874-1945)** - հայ պետական, քաղաքական ականավոր գործիչ, ՀՀՂ անդամ: Ծնվել է Թիֆլիսում: 1891 թ. ավարտել է Թիֆլիսի պետական գիմնազիան, 1897 թ. Մոսկվայի համալսարանի բժշկության բաժնից: 1902 թ. ընտրվում է Թիֆլիսի քաղաքային դումայի նախագահ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի խորհրդակալ, 1905 թվականից քաղաքային վարչության անդամ: 1910-1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ: 1915-1917 թթ. եղել է Հայոց Ազգային բյուրոյի նախագահի տեղակալը: 1917 թ. վերջին տեղափոխվում է Հայաստան և ընտրվում Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: 1918 թ. նշանակվում է նորաստեղծ Անդրկովկասյան ժողովրդավարական Ղաշնային Հանրապետության ֆինանսների և պարենի նախարար: Անկախ Հայաստանի Հանրապետության անունից 1918 թ. հունիսի 4-ին Հ. Քաջագունու հետ ստորագրում է Բաթումի խաղաղության պայմանագիրը: 1918 թ. նոյեմբերին նշանակվում է ՀՀ արտաքին գործերի նախարար: 1919 թ. ապրիլից եղել է ՀՀ վարչապետի պաշտոնակատար: 1919 թ. օգոստոսին ընտրվում է ՀՀ վարչապետ: 1920 թ. մայիսից Ա. Խատիսյանի կառավարությունը հրաժարական է տալիս: 1920 թ. ղեկտնման 2-3-ին ՀՀ անունից ստորագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանի խորհրդայնացումից հետո անցել է արտասահման: 1922-1923 թթ. մասնակցել է Լոզանի կոնֆերանսին՝ ներկայացնելով և պաշտպանելով հայ ժողովրդի շահերը Ազգերի Լիգայում: Մահացել է Փարիզում:

110 Կեղծանուն է:

111 **Քեհրոս Խան Ջևանշիր**- Ադրբեջանի Ղեծոկրատական Հանրապետության ներքին գործերի նախարար, 1918 սեպտեմբերին Բաքվում և 1920 թ. մարտին Շուշիում հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչներից: 1921 թ. հուլիսի 19-ին հայ վրիժառու Միսաք Թռույալյանը գնդակահարեց Ջևանշիրին Կ. Պոլսում:

112 **Սրինգ** - (անուն ազգանունը՝ **Արշակ Մեհրաբյան**) - ծնվել է Շուլալեքում: ՀՀՂ անդամ, ՀՀՂ Արեւելյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջ»-ի փոխարեն հրատարակված «Խարիսիս»-ի խմբագիր: Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մտերին ընկերներից մեկը: Ձերբակալվել է 1918 թ. վերջերի հայ-վրացական պատերազմի ժամանակ վրացական բանտում կորցնելով իր առողջությունը:

113 **Արամայիս Երզնկեան (1879-1937)** - հայ քաղաքական և պետական գործիչ, ԽՄԿԿ անդամ: Ծնվել է Լոռու Հաղպատ գյուղում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ժնկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1903 թ. սկսել է հաշել ՈՂԲԿ մենշևիկյան թեմին: 1917 թ. ընտրվել է Հայոց Ազգային խորհրդի անդամ: 1918 թ. եղել է Անդրկովկասյան Սեյմի պատգամավոր: Եղել է Խորհրդային Հայաստանի Հողօրոկում, ժողովմոխորի նախագահի տեղակալ, Երևանի քաղաքի գործերի նախագահ: Ա. Երզնկեանը, չնայած նրան, որ Խորհրդային Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Աղայի Խանջյանին մեղադրում էր ազգայնականության մեջ, չինայլվեց Ստալինի կողմից և 1937 թ. սպանվեց որպես ձախկաղոմյան հակահեղափոխական տրոցկիստական կազմակերպության անդամ:

114 **Պրոս Մակինցյան (1884-1938)** - հայ քաղաքական պետական գործիչ, գրականագետ: Ծնվել է Նախիջևանի Ներքին Ազուլիս գյուղում: 1906 թ. ավարտել է Մոսկվայի Լազարյան ձեմարանը, 1912 թ. Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: 1915-1918 թթ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ձեմարանում: 1918-1919 թթ. եղել է ՌՍՖՍՀ ազգությունների ժողովմոխ տեղակալը՝ հայկական գործերի գծով, 1919-1920 թթ.:

Հայաստանի դէպքում ներկայ Սուրխաթեանին¹¹⁵ փոխարինել է Թիֆլիսում Ս. Կասեանը¹¹⁶: Առաջինը մեկնել է Հայաստան:

Ջորամասի պարենաւորման մարմինը քննութեան ենթարկեց Աթարբէկեանի¹¹⁷ կողմից: Բացեցին մի շարք զեղծումներ, կատարեցին բանտարկութիւններ, գնդակահարումներ: Հայրիկ Տեր-Պողոսեանը եւ Հր. Բաղադրեանը նոյն գործով դատապարտեցին երեք տարւայ ստիպողական աշխատանքների:

Ընկեր Ս. Խ., որ եկել է Պոլսից, այժմ այստեղ է: Հնարաւորութիւն չունի Հայաստան գնալու: Ընդհանրապէս դադարեցրէք վտանգաւծ ընկերներին երկիր ուղարկելը:

Ջերմ բարեւներով ի դիմաց ԿԿ-ի՝ Սուրեն
16.11.1921

ԼՅԳ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 12 (20 էջ):
Բնագիր: Ձեռագիր:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 6

Սիրելի՛ք,

-
- ՈՒՅՏԱԿ լուսավորության ժողովմատի ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ, 1920-1921 թթ.: Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների մամուլի բյուրոյի վարիչ: 1921 թ. Ալեքսանդր Մյասնիկյանի առաջարկությամբ տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, նշանակվել ներքին գործերի ժողկոմ, միաժամանակ աշխատել որպես ժողկոմխորհի նախագահի տեղակալ: 1921-1922 թ. եղել է Հայաստանի լուսավորության ժողկոմ: 1922-1925 թթ. դիվանագիտական աշխատանք է կատարել Կ. Պոլսում, 1925-1927 թթ.: Միլանում և Փարիզում: Կյանքի վերջին տարիներին եղել է ԽՍՀՄ ՊԱ Անդրկովկասյան մասնաճյուղի գիտական քարտուղարը: Սահացել է 1937 թ., դարձել է ստալինյան ռեպրեսիաների զոհ:
- 115 **Հարություն Սուրխաթեան (1882-1938)** - ծնվել է Ղրիմի Հին Ղրիմ (Սուրխաթ) քաղաքում: Սովորել է Նոր Նախիչևանի հոգևոր սեմինարիայում, Խարկովի համալսարանում: 1910-ից մշտական բնակություն է հաստատել Թիֆլիսում, դասավանդել է տեղի գիմնազիայում և Հոլմանյան դպրոցում: Խորհրդային կարգերի հաստատումից հետո եղել է Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Խորհրդային Կրաստանում, արտասահմանի հետ մշակութային կապի Անդրկովկասյան կոմիտեի նախագահ: Կրաստանի լուսավորության կոմիտեի արհեստի լիազորությամբ վերահսկել է հայկական նոր ուղղագրության (աբեղյանական) կիրառումը Կրաստանի հայկական ուսումնական հաստատություններում: Գրականության բազմաթիվ դասագրքերի հեղինակ է:
- 116 **Սարգիս Կասյան (Քոսյան, 1876-1937)** - հայ քաղաքական, պետական գործիչ: Ծնվել է Շուշիում: Սովորել է Բաքվի ռեալական ուսումնարանում, Լայպցիգի առևտրական համալսարանում, Բեռլինի համալսարանում: 1917-1920 թթ. եղել է ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրկոմի անդամ, իսկ 1919-1920 թթ.՝ քարտուղար: 1920 թ. ընտրվել Հայաստանի Կոմունիստական կուսակցության (Արմենկոմ) նախագահ, իսկ 1920 թվականի նոյեմբերին Հայիեղկոմի նախագահ: 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո հեռացվել է Հայիեղկոմից: 1924-1927 թթ. եղել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի ռեկտորը, 1927-1931 թթ.: Անդրդաշնության և Խորհրդային Հայաստանի Կենտրոնական կոմիտեի նախագահ, 1931-1934 թթ.: Անդրդաշնության Գերագույն դատարանի նախագահ:
- 117 **Ղևորզ Աթարբեկյան (1892-1925)** - խորհրդային պետական գործիչ: Ծնվել է Վաղարշապատում: 1910 թ. ավարտել է Երևանի ռուսական արական գիմնազիան, 1914 թ.՝ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Աթարբեկյանը բոլշևիկյան քարոզչական աշխատանք է տարել Հայաստանում: 1918 թ. ամռանը, որպես Մոսկվայի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահի տեղակալ, մասնակցել է Կրաստանի մենշևիկյան իշխանությունների դեմ Աբխազիայում բռնկված ապստամբությանը, ապա նշանակվել է Հյուսիսային Կովկասի արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ: 1920 թ., իբրև Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի լիազոր, Կուբան-Սևծովյան մարզում ղեկավարել է Կրասնեյի սպիտակ-գվարդիական կազմակերպությունների դեմ պայքարը: Այնուհետև եղել է Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի լիազոր Բաքվում: 1921 թ. սկզբին նշանակվել է Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ, Փետրվարյան ապստամբության օրերին, եղել է Հայաստանի հյուսիսային շրջանների ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահը: Աշխատել է որպես Կովկասյան առանձին բանակի ռազմա-հեղափոխական խորհրդին կից Հատուկ հանձնաժողովի նախագահ, Անդրֆեդերացիայի բանգրուտեչուկյան ժողկոմի տեղակալ, 1924 թվականին՝ նաև փոստ-հեռագրի ժողկոմատի Անդրկովկասի վարչության պետ:

Մեր կացութիւնը շարունակում է մնալ նոյն դրութեան մէջ: Նոր բանտարկութիւններ չկան, բայց բռնած ընկերները շարունակում են մնալ բանտում: Ճիշտ է, մի շարք ոչ կուսակցական ու պատահական ձերբակալւածներին արդեն արձակել են: Արձակել են նաեւ Ախալցխայում ու Ախալքալաքում բանտարկւածներին: Առանձին կոնկրետ մեղադրանք չի ներկայացւած: Մեղադրականի իմաստը սա է. ձերոնք Փարիզում եկել են համաձայնության մենշտեիկներին եւ մուսավաթիստների հետ, որոշել են տապալել խորհրդային կարգերը¹¹⁸: Դուք լինելով դաշնակցականներ ուրեմն ակտիւ կերպով կիրառում եք նրանց որոշումը կեանքի մէջ: Սակայն ոչ մի փաստ, ոչ մի գրագրութիւն, ոչ մի նամակ, զենք կամ այլ մի բան, որը կարողանար մեզ վարկաբեկել, նրանց ձեռքին չկայ: Այժմ մնացել են շարած եւ չգիտեն թէ ինչ անեն: Ձերբակալութեան հրամանը եկել է Հայաստանից եւ բխում է Ալիսի որոշումից:

Միւս կողմից Հայաստանում ձերբակալւած 37 ընկերներ, որոնց թում են Ս. Թորոսեանը, Հ. Խաչատրեանը, Մխիթարը, Լօտեցեանը եւ իր եղբայրը, պոլկ. Իշխանովը, Խուդաբաշեը, Ղասաբաշեը, Ալէքը, Միսակը, Կոլոտ Գասպարը եւ ուրիշներ: Կան 13 զանգեզուրցի գիւղացիներ եւ մի հատ էլ թուրք «դաշնակցական»: Նրանց սրանից 14 օր առաջ արտրեցին Պետրովսկի¹¹⁹ պարտադիր աշխատանքներին: Չէկան նրանց անւանում է «գողեր, աւազակներ, սրիկաներ եւ անուղղելի դաշնակներ»: Այստէղից անցնելիս մենք նրանց հասցրինք անմիջական օգնութիւն: Իսկ այժմ յատուկ երկու ընկերներ ենք ուղարկում, մեկը՝ Հիւսիսային Կովկաս տեղեր պատրաստելու, իսկ երկրորդը՝ Պետրովսկ գումար հասցնելու: Մեզ թում է, որ կը յաջողի գործը կազմակերպել: Այս աշխատանքները պահանջում են մեզանից մեծ դրամներ, ուստի խնդրում ենք ձեզ յատուկ գումար այս նպատակի համար տեղափոխել:

Միւս կողմից թէ մեր բանտարկեալների, եւ թէ արտրեալների համար վարում ենք բանակցութիւններ եւ կատարում ենք դիմումներ: Գրել ենք այս մասին նաեւ Դրոյին եւ յատուկ մարդու միջոցով պատուիրել նմանօրինակ բանակցութիւններ վարել նաեւ Մոսկայում:

Հայաստանի ձերբակալութիւնները արդիւնք են պրովոկացիայի կատարւած մեր նախկին ընկերոջ կողմից, որի անունը մենք առ այժմ նպատակայարմար չենք համարում յայտնել: Կասենք միայն, որ նա պառլամենտի անդամ էր եւ պատասխանատու ու ականաւոր գործիչ:

Այժմ քաղաքական կացութեան մասին:

Անդրկովկասեան ամենահրատապ խնդիրներից գերագոյնը ֆեդերացիայի հարցն է: Краевые организации եւ Кавбюро-ն¹²⁰ որոշել են այս խնդիրը դրականա-

118 Խոսքը հավանաբար 1921 թ. Փարիզում Անդրկովկասյան նախկին անկախ հանրապետությունների ղեկավարների միջև խորհրդային իշխանության դեմ համատեղ պայքարի շուրջ կայացված համաձայնության մասին է:

119 Պետրովսկը քաղաք է Կասպից ծովի արևմտյան ափին: Այժմ կոչվում է Մախաչկալա եւ Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ մտնող Դաղստանի մայրաքաղաքն է:

120 Երկրամասային կազմակերպությունները և Կովկասյան բյուրոն (ՌԿ(Բ)Կ):

պես¹²¹: Այժմ բազմաթիւ մարմիններ, հաւաքոյթներ, բանաձեւեր են հնչում յօգուտ ֆեդերացիայի: Վարվում է մեծ պրօպագանդ¹²² թէ բանաւոր, թէ գրաւոր:

Ֆեդերացիայի գլխաւոր հիմունքները նախ քաղաքական են: Նոր հակայեղափոխական դաւադրութիւնների եւ Անտանտի դէմ կռուելու համար պահանջում է միացեալ ոյժեր, որը տալիս է Անդրկովկասի երեք հանրապետութիւնների ֆեդերացիան, իբրեւ հակադրութիւն սեւ եւ դեղին ֆեդերացիայի կնքւած հակայեղափոխականների եւ սոցիալ դաւաճանների կողմից: Երկրորդ՝ Անտանտի մասնաւորապէս Անգլիայի ձգտումը սլանալ Բաթում-Բագու, կհանդիպի Անդրկովկասեան ֆեդերացիայի կուռ դիմադրութեան: Հայկական տեսակետներն այս խնդրում հետեւեալն են. ֆեդերացիայի միջոցով հնարաւոր կլինի Հայաստանը դուրս բերել այն նեղ տնտեսական ու քաղաքական կրիզիսից, որի մէջ նա այժմ գտնուում է: Միւս կողմից Հայաստանը իր ներկայ աշխարհագրական դիրքով ի վիճակի չէ իր գոյութիւնը պահպանել, ուստի միայն ֆեդերացիան հնարաւորութիւն կտայ նրան դուրս գալ այդ կրիզիսից՝ շահագործելով հարեան երկրները:

Տաճկահայաստանի կամ Միացեալ Հայաստանի մասին ներկայ քաղաքական սիտուացիայում¹²³ խօսք լինել չի կարող: Վրացական ու ադրբեջանեան շրջանները, ընդհակառակը, դիմադրում են ֆեդերացիային՝ համարելով այն նախ անօգուտ իրենց շահերի տեսանկիւնից, երկրորդ՝ ռուսական ազդեցութեան ուժեղացումն միւս կողմից եւ հայ տարրի ուժեղացումն է միւսից: Սակայն թէ ընդհանուր պետական եւ թէ կուսակցական եւ թէ Մոսկւայի ռուսական ճնշման տակ դժգոհները լռում են եւ անգամ ջատագովում ֆեդերացիայի գաղափարը:

Կազմւած է նախագիծ ֆեդերացիայի հետեւյալ հիմունքներով:

1. Ֆեդերատիւ կոնֆերանս կազմւած երեք հանրապետութիւնների հաւասար ներկայացուցիչներից: Նրա գործադիր մարմինն է Ֆեդերատիւ խորհուրդը հետեւեալ պորտֆելներով՝ արտաքին, ժողովրդական, հաղորդակցութեան, փոստի, զինուորական, ֆինանսների, պարենաւորման եւ հակայեղափոխութեան դէմ կռող Չէկա: Խորհուրդը կարգաւորում եւ կառավարում է այս միացեալ վարչական ճիւղերը: Ամէն մի ճիւղ ունի իր ներկայացուցիչը երեք հանրապետութիւնների մէջ՝ իբրեւ լիազօր ու հաւասար անդամ ժողովրդական կոմիսարիատի: Այս է կոնստիտուտիւ¹²⁴ հիմունքները ֆեդերացիայի: Սակայն որքան հեշտ է նրան գրել, այնքան դժուար է նրան կիրառել: Այս իսկ պատճառներով Միասնիկեանը մեկնել է Մոսկւայ համապատասխան դիրեկտիւներ¹²⁵ ստանալու համար: Ֆեդերացիայի նախագահ առաջ նշմարում էր մի ռուս, իսկ այժմ խոսում է Նարիմանովի ու Միասնիկեանի թեկնածութեան մասին: Վերջնական որոշում չկայ:

2. Վերջին ժամանակներս բաւական լարւած են ռուս-տաճկական փոխյարաբերութիւնները շնորհիւ Տաճկաստանի կողմից Ֆրանսիոյ հետ կնքւած համաձայ-

121 Թիվ 7 ծանոթագրութեան մեջ մանրամասն ներկայացված է այդ գործընթացը:

122 Քարոզչություն:

123 Իրավիճակում:

124 Սահմանադրական:

125 Հրահանգ:

նություն¹²⁶: Անգամ այստեղ կենտրոնացում էր զօրք, բայց այժմ դադարեց: Չնայած դրան Բաթումը արագ տեմպերով ամրապնդում են եւ ամրությունները կարգի բերում: Անգղոբայից այստեղ հասել էր մի դելեգացիա, որը մեկնեց Մոսկւայ հարթելու այս խնդիրները: Ֆրանս-տաճկական համաձայնությունը պատճառաբանում է դելեգացիայի կողմից հետեւեալ կերպով՝ դուք ձգտում եք համաձայնութեան գալ եւրոպական իմպերիալիզմի հետ իբրեւ *передышка*¹²⁷, նոյնը կատարեցինք եւ մենք ու հասանք դրական արդիւնքի: Ցանկանում ենք, որ այդ նաեւ ձեզ յաջողի: Դելեգացիան Մոսկւայից անցնելու է Եւրոպա-Փարիզ: Նրան շատ մեծ շուքով ընդունեցին Բաթումում:

Տաճիկները իրենց աշխատանքները Անդրկովկասեան սահմաններում շարունակում են բաւականին յաջող կերպով: Ադրբեջանի թաթարները, ի ծայր զգւած մեծամասնականներից, իրենց փրկությունը տեսնում են Տաճկաստանի մէջ: Տաճիկ էմիսարներն¹²⁸ էլ շրջում են ամէն տեղ եւ վառ պահում այդ տրամադրությունը: Սրանից երկու ամիս առաջ, ինչպէս ձեզ գրել էինք, Բագում մի դաւադրութիւն բացւեց, զուտ պանիսլամական, գնդակահարւեցին 61 մարդ: Իսկ մի ամիս առաջ էլ այդպիսի մի կազմակերպութիւն բացւեց Գանձակում, տեղի ունեցան նոյնպէս գնդակահարութիւններ: Տաճիկները ոչ միայն չեն հրաժարում իրենց ծրագրերից, այլեւ վերջին ժամանակներս նոյնպէս տենդային աշխատանքների են դիմել պանթուրքական պլատֆորմով: Էները, ըստ մեր տեղեկութիւնների, գտնուում է Դաղստանում: Ուղարկել ենք պարզելու: Վրեժի կոմիտէն¹²⁹ մեզ գրում է, որ տաճիկների հետ վարում են բանակցութիւններ, տեղի են ունեցել միայն նախնական եւ ընդհանուր տեսակցութիւններ: Դէպի դաշնակցականները տաճիկների (քեմալիստների) վերաբերմունքը լաւ է: Ա. Բարալեանը չջանկանալով անցնել Խորհրդային Հայաստան, գնացել է Պարսկաստան տաճիկների օգնութեամբ եւ գտնուում է Թարիզում:

Քեմալիստները նոյնպէս աշխատում են Բաթումի շրջանում աջարացիների մէջ: Վերջին ժամանակներս Աջարիայի Յեղկոմը ցանկացաւ տաճիկների դրդմամբ իր անկախութիւնը կիրառել կեանքի մէջ¹³⁰: Ռուսները հակադրեցին այդ ձգտմանը, տաճիկները խառնեցին: Վրացական չէկան կատարեց բազմաթիւ ձերբակալութիւններ, որոնց թում էին Ասլան եւ Մահմէդ բէկ Աբաշիձէները¹³¹: Ձերբակալւածների բերին Թիֆլիս, ըստ մեր տեղեկութիւնների, տաճիկները, եթէ քաղաքական սիտուացիան ների, անցնելու են Անդրկովկաս, անցնելու են Նախիջեւանի գծով Ադրբեջան: Իսկ ռուսները մտադրութիւն ունեն, եթէ նոյնպէս քաղաքական սիտուացիան թոյլ տայ, Բաթումով անցնել Տաճկաստան: Իսկ մինչ այդ, այսօր մեծ քանակութեամբ ռազմամթերք Բաթումից անցնում է Տրապիզոն՝ տաճիկների համար Խորհրդային Ռուսաստանի կողմից:

126 Խոսքը 1921 իոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված թուրք-ֆրանսիական համաձայնագրի մասին է:

127 Շնչառությունը վերականգնել:

128 Հատուկ առաքելությամբ ուղարկված գործակալ:

129 Վրեժը ՀՅԴ Հյուսիսային Պարսկաստանի կազմակերպական շրջանն է:

130 Խոսքը 1921 թ. իոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով Աջարիայի համար նախատեսված հատուկ երաշխավորված ինքնավար կարգավիճակի մասին է:

131 Հայտնի մահեդական վրաց-աջարական տոհմի ներկայացուցիչներ Աջարիայում:

Վրաստան: Վերջին ժամանակները առանձին նորություններ չկան: Մենշե-
իկների ձերբակալությունները թէ Թիֆլիսում եւ թէ գաւառում շարունակուում է:
Բանտարկւածների թիւը հասնում է մոտաւորապէս 600-ի: Գլխաւորներին տե-
ղափոխել են Թիֆլիս, իսկ երկրորդականներին պահում են գաւառում: Լուրեր
կան, որ նրանց պէտք է արքային Ռուսաստան, սակայն թէ մենշեիկները եւ թէ
վրաց բոլշեիկները հակառակուում են այդ որոշմանը՝ պատճառաբանելով, որ
Վրաստանը, իբրեւ սուվերեն պետութիւն չի կարող իր յանցաւորներին արքա-
րել պետութեան սահմաններից դուրս: Մենշեիկները հրաժարուում են քննու-
թիւն տալուց՝ պահանջելով քննել պետական՝ վրացերեն լեզուով:

Վերջացավ Թիֆլիսի եւ Բալթումի քաղաքային խորհուրդների ընտրություննե-
րը: Անցան մեծամասնականները ու մի քանի հատ էլ անկուսակցականներ եւ ձախ
ֆեդերալիստներից¹³² 10 անդամ: Սա, ի հարկէ, ընտրություններ չէին, այլ՝ կատա-
կերգութիւն, ոչ մի այլ կուսակցութիւն իրաւունք չունէր մասնակցելու: Ընտրու-
թիւնների նախօրեակին բազմաթիւ ձերբակալություններ կատարեցին, իսկ ընտ-
րողական պայքարի ժամանակ ամենաթոյլ հակաձառութիւնը կամ բացականչու-
թիւնը չէկայով էր վերջանում: Այժմ թերթերը գրում են կատարեալ հաղթանակի
մասին:

Երկրորդ խնդիրը անգործներին եւ եկտրներին հեռացնելն է (разрyзка)¹³³:
Կատարուում է ամենավայրենի կերպով: Լուսաբացին շրջապատում են քաղաքի
թաղամասերը եւ քնից հանում բնակիչներին, իսկ բնակարանները կնքում են:
Հեռացողներին էլ քշում են առանց իրեղենների կայարան: Վրացական մասսա-
ների մէջ առանձին շարժում չի նկատուում, սակայն կայ խուլ դժգոհութիւն եւ բո-
ղոք: Վերջին օրերս վալիւտան չտեսնւած կերպով բարձրացաւ՝ բարձրացնելով
իր հետ կեանքն ու անհրաժեշտ մթերքների գները:

Ադրբեջան ի ծայր ճնշւած վիճակի մէջ է, եւ շարժողութիւն, բացի վերը
նշւածից, չի նկատուում: Կեանքը այնտեղ շատ ծանր է: Հացի ֆունտն արժէ 70
հազար: Ում եւ ինչ հնարաւոր է, ձերբակալուած եւ ռէկլիզիցիայ¹³⁴ է արւած: Տե-
ղական դրամը շատ ցածր է: Վրացականի հետ համեմատուած Ադրբեջանի [մէկ]
ռուբլին արժէ վրացական 14 կոպէկ:

Ղարաբաղից տեղեկութիւններ չունենք: Այգեստանում¹³⁵ մեր մարմինը
գործում է, սակայն շատ զգոյշ եւ սահմանափակ: Քաղաքում մարդ չի մնացել,
ուստի աշխատանքները վարում են տեղերում ինքնապաշտպանութեան գա-
ղափարի շուրջը:

132 Սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցությունը վրացական ազգայնական կուսակցություն էր, որը ստեղծվել է
1901 թ.: 1904 թ. ժնկում տեղի է ունեցել կուսակցության առաջին համագումարը: 1917 թ. Փետրվարյան հեղափո-
խությունից հետո սոցիալիստ-ֆեդերալիստները պահանջել են, որ Վրաստանը մտնի Ռուսաստանի Ղաշնության
կազմի մեջ՝ տարածքային ինքնավարության սկզբունքով: 1921 թ. կուսակցությունը բաժանվել է ծախերի և աջե-
րի: Հետագայում աջերը հարել են հակախորհրդային կուսակցություններին կամ խմբերին, իսկ ծախերը համա-
գործակցել են խորհրդային իշխանության հետ: 1923 թ. նոյեմբերին ծախ սոցիալիստ-ֆեդերալիստների երկրորդ
համագումարից հետո նրանց մեծ մասը անցավ կոմկուսի շարքերը:

133 Բեռնաթափում:

134 Բռնագրավում:

135 Խոսքը ՀՅԴ Գանձակի կազմակերպական շրջանի մասին է:

Հայաստան վերջին ժամանակներս սովը սկսել է նորից սպառնալ հայ մասսաներին: Ստացած եւ գնած Եւրոպայում, Ամերիկայում եւ Պարսկաստանում մթերքները չեն բաւարարում: Թեպետ գործադրում են հսկայական ջանքեր պարենաւորել ժողովրդին, սակայն մեծամասնական սիստեմը այնպէս է, որ գնաւածներից չնչին մասն է տեղ հասնում: Մեծամասնականների շրջանում նկատուում է ազգայնացման, աւելի շուտ «նեղ ազգայնական» տենդենց: Անգամ Աւիսը՝ ներքին գործոց կոմիսարը, տարւել է այդ հովերով: Կարծում են, որ դա միգուցէ հակադրել Դաշնակցութեանը, որի հմայքն ու ազդեցութիւնը մեծ է ու տարածւած այնչափ, որչափ չէր եղել ոչ մի ժամանակ:

Մասսաները խուլ կերպով հակադրում են իրենց կառավարութեանը եւ տարածում առասպելական լուրեր՝ յոյների գալու, մեծամասնականների հեռանալու, ֆրանսիացիների երեւալու եւ սրանց նման «մխիթարական» գեղեցկութիւնների: Չնայած մասսաների այդպիսի տրամադրութեան ու պարենաւորման ծանր վիճակին, Հայաստանի ղեկավարութիւնը օրը օրին Մոսկւայ գեկուցումներ է գրում՝ նկարագրելով Հայաստանը իբրեւ դրախտ, իսկ մասսաների տրամադրութիւնը՝ մեծամասնական, հակադաշնակցական: Մոտ օրերս մեզ միայն այս յաջողւեց իմանալ եւ այժմ միջոցներ ենք ձեռք առնում Մոսկւայի առաջ պարզելու երկրի իրական վիճակը եւ մեր արժեքը: Դուրս է գալիս, որ Լենինը¹³⁶ Հայկական խնդրով չի հետաքրքրուում, իսկ Անդրկովկասեան քաղաքականութիւնը վարում է Զուգաշլիլին¹³⁷, որը յայտնի է իբրեւ շովինիստ եւ հայակեր:

Տնտեսական տագնապը նոյնպէս վանել է մեծամասնականներից հայ «վարժապետական» ինտելիգենցիային, որը հակադաշնակցական տրամադրութիւնից թեքում է դէպի դաշնակցական: Հայաստանի Յեղկոմը թոյլ է տւել Հայաստանից հեռացւած թաթարներին վերադառնալ իրենց բնակավայրերը, մինչդեռ Ադրբեյջանի Յեղկոմը այդպիսի թոյլտուութիւն չի տւել հայ գաղթականների վերաբերմամբ: Այս իսկ պատճառով հայ գաղթականութիւնը, տեղաւորւած թաթարական գիւղերում, այժմ տեղահանուում է ու մնում թափառական վիճակի մէջ:

Ռուսաստան: Աջացման քաղաքականութիւնը¹³⁸ արագ տեմպերով զարգանում է: Յունւար 1-ից բաց է թողնուում ոսկի դրամ, որի 1 ռուբլին արժենալու է 10 հազար ներկայի: Սովը օրը օրին ծաւալուում է, Դոնի, Օդեսսայի շրջաններում նորից բռնկւել է ուժեղ թափերով: Օրենբուրգի շրջանում հասել է այնպի-

136 **Վլադիմիր Լենին (Ուլյանով, 1870-1924)** - ռուս հայտնի հեղափոխական, քաղաքական գործիչ, բոլշևիկյան կուսակցության առաջնորդը: 1917-1924 թթ. եղել է Խորհրդային Ռուսաստանի, իսկ 1922-1924 թթ.՝ Խորհրդային Միության ղեկավարը:

137 **Իոսիֆ Տոլաշվիլի-Ստալին (1879-1953)** - խորհրդային կուսակցական, պետական ականավոր գործիչ, Կոմունիստական կուսակցության առաջնորդ: Ծնվել է Վրաստանի Գորի քաղաքում: 1894 թ. ավարտել է Գորիի հոգևոր ուսումնարանը: Այնուհետև ուսումը շարունակել է Թիֆլիսի ուղղափառ հոգևոր ձեռնարանում, որտեղից հեռացրել են հեղափոխական գործունեության համար: 1903 թ. ռուսական սոցիալ-դեմոկրատների բոլշևիկներ և մենշևիկներ պառակտումից հետո, միացել է բոլշևիկներին: 1910-ից Ստալինը հանդիսանում էր Կովկասի գծով բոլշևիկյան կուսակցության կենտրոնի լիազոր անձը («Կենտրոնի լուտես»): 1912 թ. Իոսիֆ Տոլաշվիլին վերջնականապէս ընդունում է «Ստալին» կեղծանունը: 1913 թ. բանտարկվել է, ապա արձարվել: 1917 թ. մարտին, Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձել է Պետրոգրադ: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ընտրվել է Խորհրդային Ռուսաստանի Ժողովմխորի անդամ: Ակտիվորեն մասնակցել է Ռուսաստանի քաղաքացիական պատերազմին: 1922 թ. ընտրվել է ՌՍԴ(Բ)Կ գլխավոր քարտուղար: Լենինի մահից հետո (1924 թ.) մինչև իր մահը ղեկավարել է ԽՍՀՄ-ը:

138 Խոսքը ԵՄԴ-ի՝ Նոր տնտեսական քաղաքականության մասին է:

սի ծաւալի, որ ըստ իրենց թերթերի, չուվաշների¹³⁹ մի գիւղ հաւաքել մի քանի տներում, վառարանները վառել, փակել օդանցքները եւ խեղդել ու վերջ տւել սովեալ վիճակին:

Մեծամասնականները քաղաքական ղէկը ուժեղ կերպով իրենց ձեռքում են պահում՝ հալածելով միւս բոլոր հոսանքներին: Գեներալ Սլաշչովի¹⁴⁰ վերադարձը եւ Պրազայում հրատարակած “Смена Вех”-ը¹⁴¹, որ ձանաչում է խորհրդային կարգերի հակառակորդների կողմից, մեծամասնականները համարում են իրենց վերջնական յաղթանակը եւ պետական ձեւի հաստատումը, որի առաջ արդեն սկսել են խոնարհել անգամ Եւրոպայում ապաւինւած հակադիր ոյժերը: Երկրի ներսում ուշագրաւ շարժումներ չկան: Հիւսիսային Կովկասում գեներալ Պրժեւալսկոյ¹⁴² շարժումը չի ծաւալոււմ: Մոզդոկի շրջանում նոր ապստամբութիւն է բռնկւել: Սակայն անարխիստն ու հակամեծամասնական տրամադրութիւնը, որը դեռ չի գտել իր ձեւակերպումը, շատ տարածւած ու ընդլայնւած է: Միւս կողմից բուրժուազիան օգտուելով նոր տնտեսական քաղաքականութիւնից, աշխատում է արդիւնաբերական հաստատութիւնները, ֆաբրիկաներն ու գաւտղներն¹⁴³ իրենց ձեռքը գցել: Խուլ ու համառ պայքար է նկատոււմ: Մեծամասնականները զգում են այդ վտանգը եւ իրենց պարտութիւնը: Մեծամասնականները մեծ յոյսեր են կապում Գերմանիայի ներքին կրիզիսի ու տեղի ունեցող շարժումների հետ¹⁴⁴:

Կուսակցական կեանքը ընթանում է իր սովորական ուղիով: Ոչ մի լքում չի նկատոււմ մեր շարքերում, ընդհակառակը, տրամադրութիւնը ամեն տեղ բարձր է: Բաց մնացած տեղերը փոխարինոււմ են նորերով: Աշխատում ենք մաքրել շարքերը պրովոկատորներից¹⁴⁵ եւ կասկածելի տարրերից: Միւս կողմից աշխատում ենք կուսակցութիւնը նորից դուրս բերել իր ներկայ անորոշ

139 Չուվաշներ - Ռուսաստանի կենտրոնական շրջանում ապրող թուրքալեզու, բայց հիմնականում քրիստոնյա (ուղղափառ) ժողովուրդ:

140 **Յակով Սլաշչով (1885-1929)** - ռուսական ռազմական գործիչ, ռուսական կայսերական բանակի գնդապետ, ապա Կամավորական բանակի գեներալ-մայոր: Քաղաքացիական պատերազմի ժամանակ ակտիվորեն մասնակցել է Հիւսիսային Կովկասում և Ղրիմում խորհրդային զորքերի դեմ մղվող կռիվներին: Տարագրվել է Կ. Պոլիս: 1921 թ. վերջին, օգտվելով խորհրդային Ռուսաստանի ղեկավարության կողմից հայտարարած համաներման հնարավորությունից, վերադարձել է Մոսկվա: Իր օրինակին են հետևել տարագրության մեջ հաստատված բազմաթիվ ռուս զինվորականներ: Սպանվել է սեփական բնակարանում:

141 «Սմենա վեխ» («Ուղեծիւղների փոփոխություն») խորագրով ժողովածուն լույս է տեսել 1921-1922 թթ. Պրահայում ռուս տարագիր կազմեւ և օկտյաբրիստ գործիչների (Նիկոլայ Ուստոյայով, Յուրի Կյուլչինկով և ուրիշներ) ջանքերով: Այս ժողովածուի հրատարակումով ռուս տարագիր մտավորականության մեջ 20-րդ դ. 20-ական թթ. տարածվեց «Սմենավեխականություն» կոչված հասարակական-քաղաքական հոսանքը, որն առաջ եկավ բոլշևիկների կողմից ՆԷՊ-ին անցում կատարելու հայտարարությունից հետո: Բոլշևիկների առաջնորդ Վլադիմիր Լենինը պարզաբանում էր, որ Նոր տնտեսական քաղաքականությունը նշանակում է որոշակի չափով անցում դեպի կապիտալիզմ: Սմենավեխականները յուրովի էին մեկնաբանում նոր բուրժուազիայի (ՆԷՊ-ական) գաղափարները: Նրանք մտավորականությանը կոչ էին անում համագործակցել խորհրդային իշխանությունների հետ՝ հույս ունենալով, որ ՆԷՊ-ի պայմաններում խորհրդային իշխանությունը կվերանայնի և հնարավոր կլինի վերադառնալ կապիտալիզմին: Այս կապակցությամբ աշխույժ քննարկումներ և բանավեճեր կազմակերպեց «Սմենա վեխ» ժողովածուն:

142 **Միխայիլ Պրժեւալսկի (1859-1934)** - ցարական բանակի զորահամանատար: 1917 թ. հունիս-դեկտեմբերին եղել է Կովկասյան ռազմաճակատի հրամանատարը: Սպիտակգլարիականների կողմից ակտիվորեն մասնակցել է քաղաքացիական կռիվներին: 1919 թ. ընդգրկվել է Կուբանում գեներալ Անտոն Դենիկինի ընդիմանոր հրամանատարության տակ գտնվող Ռուսաստանի հարավի զինված ուժերում: 1921 թ. ընտրվել է Կուբանի հակախորհրդային ապստամբական բանակի հրամանատար: 1921 թ. սեպտեմբերին նրա բանակը պարտություն է կրել խորհրդային զորքերից Սեմյոն Բուդյոննիի զլխավորությամբ: Տարագրության տարիներն անցկացրել է Հարավկավիայում:

143 Գործարաններ:

144 Հավանաբար նկատի ունի 1921 թ. Գերմանիայում (Վայմարյան Հանրապետությունում) կոմունիստական շարժման ակտիվացումը:

145 Սարդիներից:

կացութիւնից դէպի լեգալ (համեմատաբար) վիճակը, առանց զգալի կոմպրոմիսների¹⁴⁶ ու զիջումների համաձայն կուսակցութեան տրադիցիայի¹⁴⁷:

Մեզ հասած տեղեկութիւնների համաձայն դուք մտադրութիւն ունեք գումարել ընդհանուր ժողով: Մեր այստեղի ընկերների (առ այժմ պաշտօնական որոշում չունենք) կարծիքն այն է, որ այդ ժողովը յետաձգւի կամ վերածի կոնֆերանսի արտասահմանեան մարմինների¹⁴⁸: Երկրից մենք հնարաւորութիւն չենք ունենալ ընկերներ տեղափոխել, եւ նրանց գալը մենք գտնում ենք աննպատակահարմար, որովհետեւ նախ կվտանգենք այստեղի կազմակերպութիւնները մի կողմից եւ հալածանքի կենթարկենք նրանց՝ միւսից: Քաղաքական տեսակետից էլ ընդհանուր ժողովը կըկաշկանդէ մեր այստեղի մարմինների էլաստիկ¹⁴⁹ վիճակը եւ տեղի կտայ ներքին բաղխումների ու կատակլիզմների¹⁵⁰:

Ֆինանսական: Ձեզանից մենք հոկտեմբեր ամսին գրած նամակի հետ ստացել ենք հինգ հարիւր լիրայ եւ երկու հարիւր լիրայ էլ ընկերներին բաժանելու համար: Բացի դրանից մենք պարտք ենք վերցրել նաեւ 300 լիրայ: Ուստի խնդրում ենք ձեզ տեղափոխել նոյեմբերի եւ դեկտեմբերի մեզ հասանելիք գումարը՝ 1000 լիրան, վճարել վերցրած 300 պարտքը եւ մի աւելորդ գումար էլ տեղափոխել քարտրածների ու բանտի ծախսերի համար, որը մեզ համար չափազանց մեծ գումար է նստում:

Ձեզանից ինֆորմացիա բնաւ չունենք, խնդրում ենք, գրէք:

Ընկերական բարեւներով

Ի դիմաց ԿԿ՝ Սուրեն

17.12.1921

ՀՅԴ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 14 (22 էջ):

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 7

ՀՀ Փարիզի պատուիրակութեանը,

Ուղարկում ենք ձեզ Վրաստանից ուղարկած յունար 4-ի նամակի պատճէնը.

Ա. Ընդհանուր քաղաքական: Մեծամասնական ու կառավարչական շրջանները գերազանց կերպով մտահոգւած են վերջին Ֆրանկո-Տաճկական համաձայնութիւնից եւ համարում են սա ազրեսիւ քայլ հանդէպ իրենց Անտանտի կողմից գործիք դարձած Տաճկաստանի: Սակայն իրանք էլ իրենց հերթին պատրաստուում են ոչ միայն հարուածն ընդունելու, այլ անգամ իրերի ինիցիա-

146 Փոխզիջումների:

147 Ավանդույթի:

148 Մինչ այս նամակը գրելը 1921 թ. ապրիլին Բուխարեստում տեղի էր ունեցել ՀՅԴ Արտասահմանյան մարմինների խորհրդաժողով, որում քննարկվել էին կուսակցությանն առնչվող և օրվա քաղաքական օրակարգից բխող հարցեր ու նաև նոր Ընդհանուր ժողով գումարելու անհրաժեշտությունը: Սակայն մինչև նոր Ընդհանուր ժողովը (10-րդը), որ տեղի ունեցավ 1924 թ. նոյեմբեր-1925 թ. հունվարին, 1923 թ. Վիեննայում տեղի ունեցավ ՀՅԴ մարմինների ևս մեկ խորհրդաժողով:

149 Առաձգական: Նկատի ունի իրավիճակին համապատասխան ձկունությունը:

150 Ցնցումների

տիւան¹⁵¹ իրենց ձեռքը վերցնելու: Այս իսկ պատճառով տենդային աշխատանքներ են վարում այս ուղղութեամբ: Յայտարարել է զօրահաւաք 1900 թվականների [ծնվածների] թէ Հայաստանում, թէ Վրաստանում: Պարզաբանող յօդուածների մէջ մամուլի էջերում նրանք գրում են հակայեղափոխական ոտնձգութիւնների մասին՝ կազմակերպուած Անտանտի կողմից եւ մասնաւորապէս Ֆրանսիայի: Զօրահաւաքի վրայ մեծ յոյսեր չունենալով, նրանք աշխատում են, ըստ հնարաւորին զօրքեր կենտրոնացնել Անդրկովկաս: Բայց ըստ երեւոյթին, մեծ քանակութեամբ անգամ բաւական թուով, նրանք դժարանում են զօրք բերել: Լրացուցիչ տւեալներ կը տանք յետագայ նամակներում: Խօսում են, որ այս ձակատ պիտի տեղափոխուի նաեւ Բուդիօնի¹⁵² ձիախումբի որոշ մասերը: Սակայն մինչ օրս քիչ քանակութեամբ զօրքեր են բերել: Եւ զօրքերի թէ տրամադրութիւնը եւ թէ վիճակը բաւականին ցածր ու խղճալի է: Դասալքութիւնը շատ տարածուած է, եթէ չասենք ընդհանուր է: Իսկ հայկական կամ վրացական բանակներ փաստօրէն գոյութիւն չունեն: Հայ զօրամասերի թիւը չի հասնում մի քանի հազարի, իսկ վրացականը՝ աւելի քիչ: Բանակի վիճակին համապատասխանում են նաեւ երկու ժողովուրդների տրամադրութիւնները:

Հայ մասսաները յոգնած եւ ուժասպառ են եղած, կուելու կամ պայքարելու տրամադրութիւն բնաւ չունեն, այլ իրենց գոյութիւնը փրկելու համար միայն գաղթի կը դիմեն: Վրացական մասսաները հակամեծամասնական տրամադրութեամբ տարած ու հոգնած նոյնպէս չեն կուի:

Հակառակ տրամադրութիւն է ցոյց տալիս Ադրբէյջանի եւ Կովկասի թրքութիւնը, որոնք տաճիկների մէջ են տեսնում իրենց փրկութիւնը եւ երեւան կըզան ագրեսիւ ու ակտիւ կերպով: Տաճկական ազենտներն էլ այդ ուղղութեամբ պրոպագանդ են մղում ու պատրաստութիւններ են տեսնում: 1918 թ. շրջանն ենք ապրում, միայն այն տարբերութեամբ, որ հայկական ոյժը աւելի թոյլ է, իներտ եւ անկազմակերպ, վրացականը՝ հակառակ ռուսականի, իսկ թաթարականը՝ աւելի կազմակերպուած ու եռանդուն: Ռուսական բանակի դրութիւնը բաւականին փափուկ է, երբ նկատի ենք առնում այս անաչառ տւեալները: Ռուսական շտաբը որոշել է երկրի պաշտպանողական գիծը ընտրել Սիմէօնովկայի¹⁵³ եւ Բզովդալի¹⁵⁴ բարձունքները՝ քաշելով Հայաստանից, սակայն հայ կոմունիստների ճնշման տակ այդ գիծը փոփոխուել է այն իմաստով, որ ռուսական զօրամասերը առաջին հարածը տան Հայաստանի սահմանները պաշտպանելիս: Ինչպէս տեսնում ենք, սիրելիք, դրութիւնը անմխիթարական է, եւ եթէ աւե-

151 Նախածեռնություն:

152 **Սեյմոն Բուդյոնի (1883-1973)** - խորհրդային զորահրամանատար, ԽՍՀՄ առաջին մարշալներից, Խորհրդային Միության եռակի հերոս: Քաղաքացիական պատերազմի տարիներին ղեկավարել է Կարմիր բանակի 1-ին հեծելազորային բանակը, աչքի է ընկել անձնական խիզախութեամբ և ռազմական հմտությամբ: Բուդյոնին իր մեծ ավանդն է ունեցել Կարմիր բանակի կազմավորման գործում: 1932 թվականին ավարտել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Որպէս Հարավարևմտյան (1941 թ. հունիս-սեպտեմբեր), ապա Հյուսիսկովկասյան (1942 թ. մայիս-սեպտեմբեր) ռազմաճակատների, ապա Խորհրդային Միության հեծելազորային զորքերի հրամանատար, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.): Հետպատերազմյան տարիներին ղեկավար աշխատանք է վարել ԽՍՀՄ պաշտպանության, այնուհետև գյուղատնտեսության մինիստրություններում:

153 Սիմյոնովկան գյուղ է Սևանա լճից հյուսիս-արևմուտք, Սևանի լեռնանցքի մոտ:

154 Այստեղ նկատի ունի Բազումի լեռները:

լացնենք սրա վրայ լեռնականների ապստամբական պատրաստությունները (այս տեղեկությունները մեզ հասել են քեմալական միսսիայից), կստացուի Անդրկովկասեան դժոխք այնքան ծանօթ բոլորիս համար: Մեզ մեծամասնականները բոլորովին չեն վստահում, նախ հայերը իրենց դիրքի համար աշխատում են մեզ չէզոքացնել ու կազմալուծել, իսկ վրացիք ու թուրքերը իրենց քաղաքական նկատառումներից դրդուած դիրացնում են դէպի մեզ ուղղուած ագրեսիւ քաղաքականութիւնը:

Մենք քննութեան առնելով ձեր դեկտեմբերի 12-ի նամակը եւ ստեղծած քաղաքական կացութիւնը, եկանք հետեւեալ եզրակացութեան.

Որ ռուս-թուրքական պատերազմի բռնկման դէպքում Ռուսաստանի եւ մասնաւորապէս Անդրկովկասի մեծամասնական կառավարութեան զինուած ուժերի վիճակն այնպէս է, որ նրա համար կարող է ստեղծուել կրիտիկական¹⁵⁵ վիճակ: Իսկ տաճիկների դրութիւնը, հակառակ մեծամասնականների, շատ ուժեղ է ռազմական տեսակէտից:

Որ Անդրկովկասեան ժողովուրդներից վրացականը լաւագոյն դէպքում կըմնայ չէզոք, իսկ վատագոյն պարագայում էլ կ'ապստամբի տիրող ռուս մեծամասնական իշխանութեան դէմ, մանաւանդ եթէ յայտարարի Վրաստանի անկախութիւնն ու նախկին իշխանութեան վերադարձը:

Որ մուսուլման շրջանները թէ հարաւ-արեւմտեան, թէ Կարսի, թէ Նախիջեւանի եւ թէ Ադրբէջանի, միանգամայն տաճկական օրինետացիայ ունեն եւ պատրաստուում են ապստամբելու:

Որ նոյն ապստամբական հակառուսական ոգով տարած են հաղորդակցութեան ուղու վրա իշխող լեռնական ժողովուրդներն էլ:

Որ այս պայմաններում ռուսական բանակի համար անհնարին ու դժար է (Կարսի գիջումից յետոյ¹⁵⁶) ռազմական ու ստրատեգիկ ճակատ:

Որ մեծամասնական Ռուսաստանին միակ հաւատարիմ նեցուկ կարող էր հանդիսանալ իր պատմական ու արդի տւեալներով հայ աշխատաւորութիւնն, որը սակայն քայքայած ու հիւծուած է մեծամասնականների քաղաքականութեան շնորհիւ տաճկական հակայեղափոխութեան ներխուժմամբ եւ այսօր դիմադրութեան ոչ մի հնարաւորութիւն չունի:

Միւս կողմից ի նկատի ունենալով տաճիկների ներխուժման դէպքում այն բոլոր աջակից ազդակները, որոնք թեթեւացնելու են նրանց առաջխաղացումը Անդրկովկասում, որ տաճիկ բանակը իր առաջխաղացողութեան ընթացքում հանդիպելու է բացի հայ եւ մասամբ վրացի ժողովրդի, միւս բոլոր ժողովուրդների համակրութեանը եւ ակտիւ աջակցութեանը: Որ այդ ուղղութեամբ արդեն կատարուում եւ կատարուել են նախապատրաստական աշխատանքներ, որ ստրատեգիկ¹⁵⁷ տեսակետներից դրքան աննպաստ է ռուս բանակի համար, այնքան նպաստող է մուսուլմանների համար, քանի որ հոծ մեծամասնութիւնը գրաւած է

155 Շայրահեղ:

156 Նկատի ունի 1921 թ. Մոսկվայի պայմանագրով բոլշևիկների կողմից Կարսը թուրքերին հանձնելը:

157 Ռազմավարական:

բոլոր կարեւոր անցքերն ու դիրքերը, որ տաճիկ զօրքերի տեղափոխութիւնը կատարվելու է 1918 թ.-ի նման գաղտնի եւ անակնկալ, որ այդ ռազմական գործողութիւններին գերազանցապէս նպաստելու են նորակազմ մուսուլմանական հանրապետութիւններն, ինչպէս օրինակ՝ Աջարիան եւ Նախկրայը¹⁵⁸:

Այս երկու վերոյիշեալ տւեալներն ի նկատի ունենալով, մենք որոշեցինք համարել ռուս տաճկական պատերազմը իբրեւ հետեւանք մեծամասնականների սխալ քաղաքականութեան Արեւելքում, կործանարար եւ ճակատագրական հայ աշխատաւորութեան համար, եւ որ տաճիկների ներխուժումը իբրեւ արդիւնք ինպերիալիզմի զազիր քաղաքականութեան, նոյնքան կործանարար է արեւելքի աշխատաւոր մասսաների եւ մասնաւորապէս հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակութիւն ունի՝ չնայած ամեն տեսակի «գարանտիաներին»¹⁵⁹:

3) Համարել Անդրկովկասի եւ Հայաստանի սահմաններում Հայաստանի կառավարութիւնը միակ կազմակերպիչը ներկայ պայմաններում հայ ժողովրդի պատմական ու քաղաքական ոյժի, ուստի եւ աջակցել նրան յանուն հայ աշխատաւորութեան ֆիզիկական գոյութեան; 4) աշխատել չ'գրգռել տաճիկներին երեւան գալով իբրեւ ուրոյն Հ.Յ. Դաշնակցական կազմակերպութիւն; 5) Ի նկատի ունենալով սպասելիք արհաւիրքներն ու ծագող քաղաքական մօմենտի վայրիվերումները՝ կազմակերպել հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը կուսակցութեան ու նրա համակիր ոյժերով, անկախ ռուսական բանակի գործողութիւններից եւ իւր նահանջումներից; 6) իսկ ինչ վերաբերում է մեր արտասահմանեան կազմակերպութիւններին, որոնք Անտանտի քաղաքական օրբիտի¹⁶⁰ մէջ են գտնուում եւ մասնաւորապէս Հայաստանի Բիւրո-Կառավարութեան¹⁶¹, որը վարել է Անտանտի օրինատացիայ, պէտք է ամեն կերպ աջակցեն, ըստ մեր կարծիքի, ի նկատի ունենալով հայ ժողովրդի ֆիզիկական փրկութիւնը, եթէ ի վիճակի չեն փոփոխել ստեղծած քաղաքական կոմբինացիան եւ այդպիսով որոշ չափով մեղմացնել Ֆրանկո-տաճկական քաղաքականութեան հետեւանքները: Միւս կողմից 1) ի նկատի ունենալով զարգացող դէպքերը, հաղորդակցութեան փակւելը, առաջարկում ենք ձեզ միանգամից խոշոր գումար տեղափոխել մեզ ընդգծած աշխատանքների համար, 2) Ի նկատի ունենալով, որ Հայաստանի համար եկած ալիւրի եւ մթերքների 90% յատկացուած են ռուսական նոյնիսկ կարմիր բանակի պետքերի համար, առաջարկում ենք ձեզ դիմել ուր որ հարկն է եւ աշխատել ապահովել հայ ժողովրդի պարենաւորման գործը՝ հայ մասսաների շահերի տեսակետից եւ անհապաղ ալիւր տեղափոխել, որպեսզի սովից կարելի լինի փրկել նրան ճանապարհների փակւելու դէպքում:

158 Նախիջևանի երկրամասը:

159 Երաշխիքներին:

160 Պետք է լինի օրբիտի՝ ուղեծիր:

161 1920 թ. Մայիսյան ապստամբութեամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ հրաժարական տվեց: Մայիսի 5-ին ընտրվեց նոր կառավարություն Համո Օհանջանյանի գլխավորությամբ: Քանի որ կառավարության կազմում ընդգրկվեցին միայն ՀՅԴ Բյուրոյի անդամները, այն հայտնի է նաև Բյուրո-կառավարություն անվամբ:

Սիրելի՛ք, շատ պատասխանատու է մօմենտը եւ մեծ արհաւիրքների առաջ կանգնած, բայց մենք կաշխատենք, ինչ որ հնարաւոր է անել, առանց մի վայրկեան դանդաղելու: Մեր կարծիքով ռուսաց գործն այստեղ շատ խախտու է եւ անգամ անյուսակի, ուստի դուք պէտք է աշխատեք ամեն մի գոյներով ապահովել տաճկական զօրքի ներխուժման դէպքում հայ ժողովուրդը կոտորածներից: Ֆրանսիական կոմիսիաներ, զանազան գարանտիաներ, անգամ մեր ընկերներին իբրեւ ներկայացուցիչներ եւ հսկիչներ ունենալ:

Բ. Ընդհանուր: Ներքին կեանքն Անդրկովկասում մնում է նոյն վիճակի մէջ, ինչ որ գրել էինք նախորդ նամակում: Այս ուղղութեամբ առանձին նորութիւններ չկան: Ըստ տաճիկների կարծիքի Անդրկովկասեան ֆեդերացիան հազիւ թէ գլուխ գայ:

Գ. Կուսակցական: Վրէժի կոմիտէութիւնից առանձին նորութիւն չկայ, վերջին տեղեկութիւնը ստացել ենք 10 օր առաջ: Պետրովսկ արքայապետը ընկերներին կարողացանք յատուկ ընկեր ուղարկելով դրան հասցնել եւ ապա, ըստ հնարաւորութեան, ապահովել նաեւ նրանց փախուստի կազմակերպման գործը: Այս բանը բաւական գումար նստեց, ուստի մենք ձեզանից խնդրել էինք տեղափոխել նրանց համար երկու հարիւր լիրա: Վանեցի հայտնի ընկեր Թէոսը մօտ օրերս վախճանեց:

Ստորագրութիւն

ԼՅԴ արխիւ, Մաս Ե, թղթածրար թիւ 262, փաստաթուղթ թիւ 19 (6 էջ):

Խաչատուր Ռ. Ստեփանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են 19-րդ դ. վերջի – 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) և Խորհրդային Հայաստանի պատմության հիմնահարցերը: Զբաղվել է նաև 1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գիտական ուսումնասիրությամբ: Հեղինակ է հինգ մենագրության, մեկ բուհական դասագրքի, շուրջ 80 գիտական և գիտամեթոդական հոդվածների:

Summary

THE LETTERS OF 1921 OF THE ARF CENTRAL COMMITTEE OF GEORGIA

ARF Foreign Responsible Body

Khachatur R. Stepanyan

Doctor of Sciences in History

Key words - Georgia, ARF, Tiflis, Bolsheviks, underground, Responsible body, correspondence, Menshevik Party, Pan-Turkic programs, Central Committee.

The presented documents reflect the 1921 activities of the ARF Dashnaksutyun in Soviet Georgia. In some cases, there is information about the general organizational and political situation of the ARF Dashnaksutyun in Soviet Armenia and Soviet Azerbaijan. The persecution policy led by the Soviet authorities forced the ARF leadership, like other non-Bolshevik parties, to operate mainly underground in Transcaucasia.

The decision to continue operating under prohibited conditions was due to fears that in the event of an imminent overthrow of the Bolshevik regime, the ARF's organizational and political presence could be used to meet potential challenges.

The letters sent by the ARF Central Committee of Georgia to the Foreign Responsible Body contain interesting information about the Transcaucasus, the political events around it, the Kemalist Pan-Turkic plans, Soviet Georgia, the agreed discriminatory policy pursued by the Soviet authorities against Soviet Armenia, the difficult economic situation in the region, etc. In particular, they present the restraints imposed by the Soviet authorities in Georgia, the intolerable situation of the peasantry. Episodes of the epidemic, implemented severe tax and monetary policy are described.

The letters also contain important information on the process of formation of the Transcaucasian Soviet Federation. There are reports of coercion from Moscow and Georgia's attitude towards it. The Georgians were opposed to Armenia's "alliance with Georgia" and believed that Soviet Georgia should either be independent or form a direct union with Soviet Russia.

The information about the Pan-Turkic programs implemented by the Kemalists in the Muslim-populated areas of Georgia is also unique. In Adjara, in

the province of Akhaltsikhe, the Turks set up a special agent network to facilitate their further steps.

All the letters indiscriminately present the organizational situation of the ARF in Georgia, the arrests of the ARF members, the necessity to take care of the detainees and the persecuted, the need for material resources.

Some random but interesting news are also reported about the presence of Enver – one of the organizers of the Armenian Genocide, in Georgia.

Although the author of the letters is the ARF Central Committee of Georgia, the main information concerns Georgia, but the reports about Armenia are no less important. The economic and political processes conducted by the Soviet authorities in Armenia were, in fact, mainly similar to those of Georgia. Here there is special information about the activities implemented by the Soviet Armenian authorities with the Diaspora. Attempts were made to present the Soviet power in the Diaspora in positive colours.

Резюме

ՄԻՍՅՄԱ ՇԵՆՏՐԱԼՆՈՒ ՄՈՄԻՏԵՏԱ ԱՐՓ ԴԱՏՆԱԿՇՄՅՈՒՆ ԴՐՅՈՒՆԻ 1921 Դ.

ՕՏՎԵՏՏՎԵՆՆՈՒ ՕՐԴԱՆ ԱՐՓ ԴԱՏՆԱԿՇՄՅՈՒՆ ԶԱՐԱԲԵՅՈՄ

Պաճատու Ք. Տեփանյան
Դոկտոր ԻՏ. Նաւկ

Կլյուճեճեճ ԳՅՄԱ - Դրյոճ, ԱՐՓ Դաճնաճշմյոճ, Տիփլիճ,
ԲՈՅՃԵՃՅՄԻԿԻ, ՍՈՒՍՅՈՒԼԵ, ՕՏՎԵՏՏՎԵՆՆԻ ՕՐԴԱՆ, ՔԵՐԵՍԻՍԿԱ,
ՔԱՐՅԱ ՄԵՆՃԵՃՅՄԻԿՈՒՄ, ՔԱՆՏՅՈՒՂԻՏԻԿԵճԻ ՔԱՆԱՅ, ՇԵՆՏՐԱԼՆԻ ՄՈՄԻՏԵՏ.

Յ ՔՐԵՏԱՎԵՆՆԻՅ ԴՈՒՄԵՆՏԱՅ ՕՏՐԱՅՆԱ ԴԵՅԱՏԵԼՆՈՒՅ ԱՐՓ Դաճնաճշմյոճ Յ ՍՈՒՅՏԻԿ ԴրյոճԻ Յ 1921 Դ. Յ ՆԵՓՈՒՂԻՅ ՏԵՅՄԱՅ ԵՃՅ ՏԱԿՅԵ ՏՎԵԴԵՆԻՅ ՕՒ ՕՒՃԵՄ ՕՐԴԱՆԻՅՈՒՆՈՒ Մ ՍՈՒՅՏԻԿ ՔՈԼՈՅՈՒՆԻ ԱՐՓ Դաճնաճշմյոճ Յ ՍՈՒՅՏԻԿ ԱՐՄԵՆԻՅ Մ ՍՈՒՅՏԻԿ ԱԶԵՐԲԱՅԴՅԱՆԵ. ՔՈԼԻՏԻԿԱ ՏՐԱՎԻ, ԿՈՒՅՈՒՅ ՎԵԼԻ ՍՈՒՅՏԻԿ ՎԵՐԱՅԻ, ԶԱՏԱՎԻԼԱ ՐՈՒՅՈՒՂԻՏԵԼՅԱՅ ԱՐՓ Դաճնաճշմյոճ, ԿԱԿ Ի ԴՐՅՈՒՄ ՆԵՓՈՒՅՃԵՃՅՄԻԿԻ ՔԱՐՅԱՅ, ՕՏՎԵՏՏՎԵՆՆԻ ՏՎՈՒՅ ՏՅՈՒՅ ԴԵՅԱՏԵԼՆՈՒՅ Յ ԶԱԿԱՎԱՅԵ Յ ՕՏՐԱՅՆՈՒ ՍՈՒՍՅՈՒԼՆՈՒ.

ՐԵՃԵՆԻՅ ՔՐՈՒՂԵՅՄԱՅ ԴԵՅԱՏԵԼՆՈՒՅ Յ ՍՈՒՅՏԻԿ ԶԱՔՐԵՏԱ ԲՅՈՒ ՕՒՍՅՈՒՎՅՈՒՆ ՕՒՅ ՏՎԵՃԱՅ ՏՐՈՒՅՃԵՃՅՄԻԿԻ ՔՐՅՈՒՂԻՏԻԿԵճԻ ՐԵՅԻՄԱ ՕՐԴԱՆԻՅՈՒՆ Մ ՍՈՒՅՏԻԿ ՔՐԵՏՅՈՒՆԻՅ ԱՐՓ Դաճնաճշմյոճ ՎԱՅՈՒՅ ԴՐԱ ՔՐՈՒՅՏՈՅՆԱՅ ՎԵՐՅՈՒՂՆԻՅ ՎՅՈՒՅՄ Յ ՕՒԼԱՅԻ ԲԵՅՈՒՍԱՅՆՈՒՅ.

В письмах, отправленных Центральным комитетом АРФ Дашнакцутюн Грузии Ответственному органу зарубежом есть интересные сведения о Закавказье, политических событиях, происходящих вокруг него, планах кемалистов, взаимосогласованной дискриминационной политике властей Советской Грузии и Советского Азербайджана по отношению к Советской Армении, тяжелом экономическом положении края и т. д.

Говорится о разнуданных действиях советских властей в Грузии, о нестерпимом положении крестьянства. Описываются эпизоды эпидемии, тяжелой налоговой и финансовой политики.

В письмах есть важные сведения о процессе образования Закавказской Федерации. Сообщаются сведения о принуждении к этому со стороны Москвы. Грузины были против создания федерации с Арменией и думали, что Грузия должна быть независимой или войти в союз непосредственно с Россией.

Своеобразны также сведения о пантюристских планах в районах Грузии, населенных мусульманами. В Аджарии, в Ахалцихском уезде турки создавали специальную агентурную сеть с целью облегчить свои дальнейшие шаги.

Во всех письмах без исключения представляется также организационное положение АРФ Дашнакцутюн, аресты, проявления заботы об арестованных и преследуемых и возрастающая нужда в финансовых средствах для решения этих задач. Сообщаются также отдельные интересные сведения о нахождении в Грузии одного из организаторов Геноцида армян – Энвера паши.

Хотя автором писем является Центральный комитет АРФ Дашнакцутюн Грузии и основные сведения касаются Грузии, но не менее важны и интересны также сообщения об Армении. Здесь выделяются сведения о работах, проводимых властями Советской Армении с диаспорой, и о попытках представить армянской диаспоре Советскую власть в положительном свете.

REFERENCES

1. **Geghamyan G.**, Sots'ial-tntesakan p'op'okhut'yunnerë Hayastanum nēpi tarinerin (1921-1936), Yer., 1978 (**in Armenian**).
2. K'aghuatsk'ner H.Y.D. artasahmanean marminneru artakarg k'orhrdazhoghovi oroshummerēn, a. T., 1923 (**in Armenian**).
3. K'aghuatsk'ner H.Y. Dashnaks'ut'ean ZhB Ĕndh. zhoghovi oroshummerēn , P'ariz, 1933 (**in Armenian**).
4. **Step'anyan Kh.**, P'etrvaryan apstambyt'yan patcharnern u hetevank'nerë sp'yurk'ahay hasarakakan-k'agha k'akan mtk'i gnahatmamb (1920-1930-akan t'vakanner), Yer., 2017 (**in Armenian**).